Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 12 (396) 1-17 հուլիս, 2016թ.

Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Վաղուց արդեն փոխվել է ստատուս քվոն

Արդեն 4 ամիս է, որ տարբեր մակարդակներում յուրաքանչյուր վերլուծաբան, հոդվածագիր, քաղաքական գործիչ եւ, ինչու չէ, ապագան վերլուծող տաքսիստ ու «բեսեդկում» նստած թաղի տղա քաղաքական վերլուծությունը սկսում է «ապրիլյան քառօրյա պատերազմից հետո» նախադասությամբ:

Նշանակում է, որ 2016 թվականի ապրիլից մեր հավաքական մտածողությունը անկյունաքարային շրջադարձի է ենթարկվել: Այն տեղի է ունեցել՝ անկախ մեր կամքից, անկախ նրանից, դա մեզ հարմար է, թե ոչ: Բոլորի միտքը այլեւս այլ հորիզոնից է նայում իրականությանը: Փոխվել է համայնապատկերը, իսկ այդ համայնապատկերում նոր երեւույթներ են նշմարվել, որոնց մասին թերեւս հինգ ամիս առաջ ոչ գիտեինք, ոչ մտածում էինք, կամ էլ՝ փակ թեմաներ էին:

Այս բոլորը անժխտելի իրականություն է, որն այլ կերպ ասած «ստատուս քվոյի» փոփոխություն է: Իսկ այս փոփոխված ստատուս քվոն շատ ավելի խորքային էր, քան սահմանների կամ ռազմական հնարավորությունների եւ կարողությունների հավասարակշռությունը: Այլեւս նախկին կյանքով ապրելը փոփոխել ո՛չ հնարավոր է, ո՛չ թույլատրելի եւ ո՛չ էլ ընդունելի:

Այն մարդիկ, ովքեր 25 տարի առաջ տեսել են պատերազմը, ապրիլին վերապրեցին պատերազմը եւ ականատեսը եղան, որ նոր սերունդը, այն տղաները, որոնք միայն լսել էին պատերազմի մասին, ոչ մի բանով պակաս չեն իրենց նախորդ սերնդից, եւ ինչպես այն սերունդը փոխեց, հիմա էլ այս երիտասարդներն են փոխել ստատուս քվոն եւ պատրաստ են ավելին անելու:

Երիտասարդներին համարում էին գալիք սերունդ, որոնց պետք է վստահենք մեր ապագան, Հայրենիքի ապագան, սակայն այդ ապագան շատ շուտ վրա հասավ, դարձավ ներկա: Դիրք բարձրացած, արյուն տեսած, թուրքին կրակած երիտասարդը այսօր հայտ է ներկայացրել ղեկավարելու, կերտելու ոչ միայն ապագան, այլ պարտադրելու նոր կյանքի օրենքներ: Այդ հայտը լուրջ է:

Կյանքի ստատուս քվոն, քաղաքական ստատուս քվոն, ինչպես նաեւ մտածողության ստատուս քվոն փոխվել է, եւ նախանձելի չէ այն մարդկանց վիճակը, ովքեր չեն զգում այդ փոփոխությունը եւ շարունակում են ցանկանալ վերադառնալ իրենց «բնականոն» կյանքին:

Նոր սերնդի հայտը շատ լուրջ եւ ծանրակշիռ կերպով հնչեց հայկական համարյա բոլոր ԶԼՄ-երով, այն 18-20 տարեկան տղաների միջոցով, որոնք ժպիտը դեմքներին եւ թախիծը աչքերում պատմում էին «անպատմելին»: Այդ վկայությունները թող դառնան հայկական դիվանագիտության քաղաքագիտության ամբիոնների գլխավոր դասագիրքը:

Արցախի կարգավիճակի մասին կարծիք հայտնող յուրաքանչյուր քաղաքական գործիչ առավել եւս միջազգային հարթակներում հանդես եկող, բանակցող անհատ թող իր ականջին օղ անի Արցախի նորորյա հերոս Ռոբերտ Աբաջյանի խոսքերը. «Մենք այս դիրքը արյունով պահեցինք, ով հանձնի այն, ես նրա...»:

Երկիրը պե՛տք է խոսի

Հայոց բազմադարյա պատմության կերտած բազում մեծերի մեջ ամենամեծերից մեկն է Արամ Մանուկյանը: Քիչ չեն ազատագրական նոր պայքարի եւ հայոց պետականության վերականգնման բովում հերոսացածները, բայց նրանց բոլորի թվում առանձնահատուկ է Արամը՝ որպես նոր պետականության հիմնադրի կերպարը առավել չափով մարմնավորող գործիչ, սակայն այսօր նրա տունն անմխիթար վիճակում է:

1917-1918 թվականներին Արամ Մանուկյանը բնակվել է ներկայիս Երեւան քաղաքի Արամի 9 հասցեում գտնվող տանը: Տունը ոչ միայն ճարտարապետական կարեւորության շենք է, այլ պատմական նշանակություն ունի, իսկ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի պատմական եւ մշակութային հուշակոթողները գտնվում են պետության հովանու ներքո: Այսօր, ըստ համապատասխան որոշման, հանրապետության հիմնադիր անձանցից մեկի տունը կքանդվի, որպեսզի նրա տակ կառուցվի ստորգետնյա ավտոկայանատեղի:

ՀՅԴ անդամ, Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի անդամ, Westinghous եւ Siemens միջազգային ընկերությունների Պետական ֆինանսների նախկին տնօրեն Կարո Արմենյանը այս առիթով գրել է.

Արամ Մանուկյանի տունը, որ Առաջին Հանրապետության բացառիկ հիշատակարանն է, կրկին վտանգի տակ է: Այն հանձնված է բախտախնդիրների քմահաճույքին: Այն լքված է պետության կողմից: Այն անարգված է ժողովրդի կողմից: Այն կեցած է առանձին անժառանգ մարդկանց անշնորհքության դիմաց:

Տարիներ ի վեր ահազանգ ենք հնչեցնում, որ մեր անկախ պետականության վկաները հանդիսացող եւ դեռ կանգուն մնացած այս վերջին կառույցները կարիք ունեն մեր հավաքական նախանձախնդրության:

Ձայն բարբառո հանապատի՛:

Արդյո՞ք մեր պատմական ժառանգության նախանձախնդիր մարդ չի մնացել մեր երկրի մայրաքաղաքում:

Արդյո՞ք հասել ենք այն կետին, ուր այլեւս դադարել են գործել երբեմնի մեր ամենազգայուն, ամենակենսական բնազդները: Ողջո՛ւյն այն անձանց, ովքեր ելել են ոտքի՝ ետ շրջելու այս ամոթալի իրավիճակը: Պատի՛վ իրենց: Բայց նաեւ, ընկերնե՛ր, վաղու՛ց անցել է ստորագրահավաքների ժամանակը: Մեր կյանքի ճգնաժամերը չի կարելի ստորագրահավաքներով դիմագրավել:

Բոլոր նախընթաց միջոցառումները պետք է համոզեն մեզ, որ «Հին Երեւան» ծրագրի տերերը շատ ավելի թունդ հորդորի կարիք ունեն այս ուշ ժամին, որպեսզի սկսեն գնահատել պատգամի լրջությունը: Երկիրը պետք է խոսի: Պատգամը պետք է հնչի հստակ եւ վերջնական: Եւ՝ հիմա՛:

Արցախյան հիմնախնդրի հանգուցալուծման բանալին գտնվում է միմիայն Արցախում



ԼՂ հիմնախնդրի լուծման բանալին Արցախում է, բանալու տերն էլ Արցախի ժողովուրդն է:

Հարցազրույց ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Իշխանյանի հետ:

Կարդացեք 2-րդ էջում

Բանակցային գործընթացում Հայաստանի վրա ճնշում կա

Միջազգային ճգնաժամային խումբը զեկույց է հրապարակել, որում անդրադարձել է ապրիլի 2-5-ը ԼՂ հակամարտության գոտում ծավալված մարտերին: Զեկույցի հեղինակները նշում են, որ....

Կարդացեք 3-րդ էջում

Արցախյան հիմնախնդրի հանգուցալուծման բանալին գտնվում է միմիայն Արցախում

ԼՂ հիմնախնդրի լուծման բանալին Արցախում է, բանալու տերն էլ Արցախի ժողովուրդն է

Հարցազրույց ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Իշխանյանի հետ:

- Ղարաբաղյան հիմնախնդիրը կրկին գերտերությունների ուշադրության կիզակետում է: Այն դարձել է տարբեր հարթակներում ակտիվ քննարկվող հարցերից մեկը, նախօրեին ՀԱՊԿ ԱԳՆԽ նիստում ընդունվեց ԼՂ հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հայտարարություն: ԵԱՀԿ ԽՎ նստաշրջանի հռչակագրում եւս անդրադարձ կար հակամարտությանը: Արցախում ինչպե՞ս են գնահատում այս ակտիվացումը:

- Սրանում որեւէ արտառոց բան չպետք է փնտրել, կարծում եմ՝ ամեն ինչ գնում է իր տրամաբանական ընթացքով: Ապրիլյան դեպքերը լուրջ ահազանգ էին թ՛ե միջազգային կառույցների, թ՛ե համանախագահող երկրների համար: Խնդրով շահագրգիռ բոլոր օղակներն այդ ցնցումից այսօր շարժվել են, ու, բանականաբար, նաեւ նշված կազմակերպությունների միջոցով պետք է արտահայտեն ապրիլյան գործողությունների հանդեպ իրենց վերաբերմունքը, որպեսզի նաեւ ի զորու լինեն ապագայում կանխարգելիչ քայլեր ձեռարկել:

Առկա է նաեւ հետեւյալ փոփոխությունը. եթե անցած տասնամյակներին ԼՂ հարցի շուրջ ԱՄՆ-ն, Ֆրանսիան, ՌԴ-ն՝ որպես համանախագահող երկրներ, կարողացել են գտնել ընդհանուր եզրեր, ապա կարծես թե ապրիլյան ռազմական գործողությունները երեւան հանեցին որոշակի տարաձայնություններ, մոտեցումների ու սկզբունքների հակասականություններ: Իսկ ձեր հիշատակած հայտարարությունների բովանդակության մեջ ակնհայտորեն ուրվագծվում է Արեւմուտքի ու Ռուսաստանի միջեւ առկա որոշ տարակարծությունների համայնապատկերը: Այն, մասնավորաբար, նկատելի է երկու կարեւոր՝ հետաքննական մեխանիզմների տեղակայման եւ ԵԱՀԿ գործող գրասենյակի ընդլայնման հարցերում: Բայց կա մի կարեւոր հանգամանք, որին մենք պետք է անպայմանորեն անդրադառնանք. այդ ամենի մեջ ոչ մի խոսք չկա ԼՂՀ ներգրավվածության մասին: Եթե ապրիլյան օրերին ՌԴ վարչապետի, նաեւ համանախագահների մակարդակով որոշակի ակնարկներ եղան բանակցային գործընթացին Ղարաբաղյան կողմի ներգրավվածության մասին, ապա այսօր այդ մասին չեն խոսում: Գերմանիայի ԱԳ նախարարի ու համանախագահների հետ ԼՂՀ նախագահի վերջին հանդիպման ժամանակ Բակո Սահակյանը հստակ հնչեցրեց այդ խնդիրը: Դա կարեւոր ազդակ էր, որ ԼՂ հարցի հանգուցալուծումն առանց ԼՂՀ ներգրավվածության չի կարող լինել լիարժեք, չի կարող մեզ համար լինել ընդունելի:

- Համանախագահները հաճախ են ասել՝ ինչ-որ փուլում Ղարաբաղը կմասնակցի բանակցային գործընթացին, իսկ թե խոսքն ի՞նչ փուլի մասին է՝ մնում է անորոշ:

- «Ինչ-որ փուլ» ասվածը տարբեր կողմերի համար տարբեր ընկալում ունի: Թե ի՞նչ են հասկանում համանախագահները «ինչ-որ փուլ» ասելով, իրոք անհայտ է, ես դա համարում եմ «փակված փակագիծ»: Բայց հայկական կողմի համար շատ պարզորոշ է՝ բոլոր փուլերում պետք է լինի Ղարաբաղյան կողմի ներգրավվածությունը, բոլոր փուլերում ԼՂՀ-ն պետք է ունենա իր ուղղակի դերակատարությունը: Այսօր Ղարաբաղն ունի անուղղակի դերակատարություն, եւ սրա ազդակն այն է, որ համանախագահողները չեն կարող հաշվի չնստել Ղարաբաղյան գործոնի ու մոտեցումների հետ:

- Հայաստանում կա մտավախություն, որ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում Ռուսաստանը փորձում է իր ձեռքը վերցնել մենաշնորհը՝ փակուղի մղելով Վիեննայում ձեռք բերված պայմանավորվածությունները: Ի՞նչ կարծիք կա Արցախում:



- Նախ՝ կուզեմ ասել հետեւյալը. մենք չպետք է քամահրանքով վերաբերվենք մեր պատմության դասերին, հակառակը, մեր պետական, քաղաքական գործիչներն այդ դասերը պետք է լրջորեն ուսումնասիրեն, սերտեն ու հաշվի առնեն: Մենք չպետք է կորցնենք մեր զգոնությունը ոչ միայն ռուսական կողմի վարվող քաղաքականության հանդեպ, այլ բոլոր կողմերի: Ինքներս պետք է մեզ հարգենք, թերահավատությամբ չվերաբերվենք սեփական ուժերին ու գնահատենք այն: Աշխարհի օրենքն է՝ օտարը, արտաքին ուժերը փորձելու են իրենց գերիշխանությունը հաստատել եւ իրավիճակը վերցնել իրենց ձեռքը: Մենք պետք է փորձենք մեր խաղը խաղալ ու իրենց մեծ խաղում նաեւ մեր քայլերը թելադրել: Սա է կարեւորը:

Այսօր հաճախ ենք տեսնում, որ համանախահագող երկրներից որեւէ մեկը փորձում է նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել, ցույց տալ, թե հիմնահարցի լուծման ամբողջական բանալին, փաթեթը հենց իր ձեռքում է: Անցյալում նման դիրքորոշում են ունեցել Ֆրանսիան, ԱՄՆ-ն: Իսկ այսօր այդպիսին է Ռուսաստանի կեցվածքը: Բայց նրանք բոլորը մոռանում են մի շատ կարեւոր հանգամանք. հիմնախնդրի հանգուցալուծման բանալին գտնվում է միմիայն Արցախում եւ բանալու տերը Արցախի ժողովուրդն է: Մնում է, որ այդ բանալին ճիշտ օգտագործվի, որպեսզի փականը բացվի ճիշտ ժամանակին ու ճիշտ տեղում՝ արցախցու ձեռքով:

- Ավելի հաճախակի են դարձել խոսակցությունները բանակցությունների ձեւաչափի փոփոխության մասին: Օրերս էլ հարցը բարձրացվել է ԵԱՀԿ ԽՎ-ի նստաշրջանում՝ Շվեդիայի պատվիրակության ղեկավարի կողմից՝ որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցությունները ակտիվացնելու նպատակով արվող քայլ: Ավելի վաղ Ադրբեջանն էր այդ միտքը շրջանառել՝ իհարկե, ներկայացնելով սեփական պատկերացումները: Իսկ ի՞նչ է անում հայկական կողմը:

- Բանակցային ձեւաչափի փոփոխման հայտ, այո, նախ ներկայացրեց Ադրբեջանը: Որպես ապրիլյան գործողությունների դրական արդյունք, Ադրբեջանն ուզում էր տեսնել փոփոխված ձեւաչափ: Իսկ ադրբեջանական տարբերակով՝ դա Ղարաբաղը որպես կողմ ամբողջապես դուրս մղելն է: Բայց դա նրան չհաջողվեց: Մենք այն համոզման ենք, որ ձեւաչափի փոփոխությունը չի կարող գործընթացում էական փոփոխության հանգեցնել, քանի դեռ Ղարաբաղը ընդգրկված չէ բանակցություններում: Մեզ համար կարեւորն այն է, որ մոտեցումների ձեւաչափի մեջ լինի ռազմավարական էական փոփոխություն, ինչը մենք այսօր չենք տեսնում:

Դառնալով հարցին՝ ի՞նչ է անում հայկական կողմը, ես առիթ եմ ունեցել խոսելու հայկական դիվանագիտության կողմից վարվող ոչ բավարար քաղաքականության մասին՝ ներկայացնելով արտաքին գերատեսչության խղճուկ վիճակը, նրա ոչ արդյունավետ քայլերը: Մենք պետք է մեր հիմնական շեշտադրումներն այդ գերատեսչության միջոցով արմատավորենք: Մենք կարող ենք հասնել հաջողության, եթե հայկական դիվանագիտական կորպուսը գործի՝ որպես մեկ միասնական ճակատ: Ցավոք, միշտ չէ, որ մեր արտաքին գերատեսչությունը կարողանում է իր շուրջը համախմբել հայության ներուժը՝ սփյուռքյան լոբբին, Հայ Դատի գրասենյակները, հայկական կազմակերպությունները:

- Ապրիլյան դեպքերից հետո Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպում տեղի ունեցավ նախ Վիեննայում՝ ԱՄՆ-ի, ապա Սանկտ-Պետերբուրգում՝ Ռուսաստանի հովանու ներքո: Սպասվող փարիզյան հանդիպումը համարենք երրորդ համանախագահող երկրի հերթական նախաձեռնությո՞ւն, թե՞ ավելի լուրջ սպասելիքներ ունենանք:

- Յուրաքանչյուրն իր շահն է հետապնդում, փորձում իր դերակատարությունը բարձրացնել: Այդ առումով՝ ես լուրջ ակնկալիքներ, սպասելիքներ չունեմ Փարիզի հանդիպումից, ինչպես նաեւ՝ ապագա հանդիպումներից: Այդ հանդիպումներում կա մեկ դրական կողմ՝ դրանք կարող են դառնալ բանակցային գործընթացի վերսկսման հիմք:

Բայց պետք է նաեւ գիտակցենք, որ այդ հանդիպումների ընթացքում աստիճանաբար փորձում են սեղմել մեր շուրջն ստեղծված օղակը: Մենք պետք է կարողանանք դիմակայել այդ ճնշմանը, չպետք է այնքան թուլանանք, որ այդ օղակը մեզ խեղդամահ անի՝ հասցնելով կրիտիկական իրավիճակի:

- Կազանյան փաստաթուղթն այդ սեղմող օղակներից մեկը չէ՞, որ այսօր փորձ է արվում բերել բանակցությունների սեղան:

- Ես պետք է ասեմ, որ այսօր առկա բոլոր փաստաթղթերը, սկզբունքները մեկը մյուսի շարունակությունն են, մեկը մյուսից ոչնչով չեն տարբերվում: Ե՛վ Քիվեստյան, ե՛ւ Մադրիդյան, ե՛ւ Կազանյան սկզբունքներն ու փաստաթղթերը ղարաբաղյան կողմի համար անընդունելի են:

Երբեմն համանախագահողները մեզ ասում են՝ պատրա՞ստ է հայկական կողմը գնալ այս կամ այն քայլին: Ես էլ ուզում եմ հասկանալ, իսկ պատրա՞ստ են համանախագահողները անել քայլեր, որոնք կբխեն ԼՂՀ-ի ու մեր ժողովրդի իրական շահերից: Իսկ այդ շահերը մենք շարադրել ենք 1990-ի սկզբից՝ 91-ի անկախության հանրաքվեով, 2006-ին մեր ընդունած Սահմանադրությամբ, ուր հստակ ուրվագծվում է մեր քաղաքական գիծը: Իսկ ապրիլյան իրադարձությունները մեր ժողովրդի մեջ ավելի արմատավորեցին, ավելի խորացրին մեր հողին ամուր կառչած մնալու գաղափարը:

- Ի՞նչ եք կարծում՝ այս բոլոր հանդիպումների, տարբեր հարթակներում տարվող ակտիվ դիվանագիտական աշխատանքի արդյունքը կլինի՞ կայուն հրադադարի հաստատումը:

- Բիսմարկյան արտահատությամբ պատասխանեմ՝ պատերազմը դա քաղաքականության շարունակություն է՝ ռազմական բնույթ ստացած: Այսինքն, մեկը մյուսով փոխկապակցված են, ու, եթե դիվանագիտական ասպարեզում կա որոշակի փակուղի, բնականաբար այն տանում է դեպի պատերազմ:

Մենք պետք է օգտագործենք մեր բոլոր դիվանագիտական հնարավորությունները, կարողանանք կառչել քաղաքական ասպարեզում չերեւացող թելերին ու հասնենք կայունության, խաղաղության հաստատման: Հայ զինվորն իր գործն արեց ապրիլյան օրերին, ինչը մեր դիվանագիտության համար լուրջ ազդակ է, խթան: Հիմա եկել է այն ճիշտ օգտագործելու պահը:

Արմինե ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ նախագահ. Ստատուս քվոն կփոխվի, եթե ճանաչվի ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը

Ստատուս քվոն կփոխվի, եթե ճանաչվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը: Այս մասին հայտարարել է նախագահ Սերժ Սարգսյանը՝ ելույթ ունենալով Վարշավայում՝ Աֆղանստանում «Հաստատակամ աջակցություն» առաքելության՝ ՆԱՏՕ-ի անդամ եւ ոչ անդամ պետությունների եւ կառավարությունների ղեկավարների ձեւաչափով հանդիպմանը, որն անցկացվում է Հյուսիսատլանտյան դաշինքի գագաթնաժողովի շրջանակներում:

«Հայաստանը խաղաղության եւ անվտանգության ակտիվ ջատագով է նաեւ մեր տարածաշրջանում, եւ մշտապես հանդես է եկել մեզ համար խիստ կարեւոր՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման դիրքերից: Սույն թվականի մայիսի 16-ին Վիեննայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների բարձր ներկայացուցիչների՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի եւ Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղարի մասնակցությամբ հանդիպման արդյունքում համատեղ հայտարարությամբ վերահաստատվեց, որ հիմնախնդիրը չի կարող ռազմական լուծում ունենալ, եւ ընդգծվեց 1994 թվականի հրադադարի եւ 1995 թվականի հրադադարի ռեժիմի ամրապնդման մասին անժամկետ համաձայնագրերի հարգման կարեւորությունը», - ասել է նախագահը:

Նախագահը նշել է, որ հայտարարության մեջ ամրագրվեց ԵԱՀԿ-ի կողմից շփման գծում հրադադարի խախտումներն արձանագրող հետաքննության մեխանիզմի ներդրումը, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի կարողությունների ընդլայնումը: Այս մոտեցումն ամրապնդվեց նաեւ Սանկտ Պետերբուրգում կայացած՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպման արդյունքում ընդունված հայտարարության մեջ:

«Ինչ վերաբերում է Ադրբեջանի նախագահի հնչեցրած մեղադրանքներին, տեղին չեմ համարում մեր այս հանդիպումը, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի հռչակագրերը արհեստականորեն Լեռնային Ղարաբաղի խնդրի քննարկման հարթակ դարձնել. դրա համար կա մասնագիտացված կառույց: Պարզապես պարտքս եմ համարում հատուկ ընդգծել, որ այսօր հակամարտության խաղաղ կարգավորման գլխավոր խոչընդոտը Ադրբեջանի բարձր ղեկավարության վարած քաղաքականությունն է եւ հարցը խաղաղ ճանապարհով լուծելու կամքի բացակայությունը: Դրա վառ ապացույցն էր Ադրբեջանի կողմից ընթացիկ տարվա ապրիլին Լեռնային Ղարաբաղի հանդեպ սանձազերծած լայնածավալ ագրեսիան, ինչը խոշոր հարված հասցրեց խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից իրականացվող ջանքերին: Ստատուս քվոն կփոխվի, եթե ճանաչվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը»,-ասել է Սերժ Սարգսյանը՝ հայտնում է նախագահի մամուլի ծառայությունը:

Նախագահն իր ելույթում մասնավորապես նշել է, որ Հայաստանը, որպես համագործակցային անվտանգության ջատագով, հաստատակամ է՝ իր համեստ ներդրումը բերելու միջազգային խաղաղության եւ անվտանգության ամրապնդման ջանքերին: «2015 թվականի սեպտեմբերին Նյու Յորքում կայացած Խաղաղության գագաթնաժողովի ժամանակ Հայաստանը լրացուցիչ հանձնառություններ ստանձնեց՝ նախապատրաստել երկրորդ աստիճանի դաշտային հոսպիտալ եւ ապահովել ինքնաշեն պայթուցիկ սարքերի վնասազերծման հատուկ վաշտի պատրաստականությունը: Մենք վերահաստատել ենք մեր ներգրավումը մինչեւ 130 զինվորականներով «Հաստատակամ աջակցություն» առաքելության կազմում եւ պատրաստ ենք շարունակելու նաեւ 2016 թվականից հետո», - ասել է նա:

Նախագահը հատուկ ընդգծել է Գերմանիայի հետ ՀՀ արդյունավետ համագործակցությունը, որը ՆԱՏՕ-ի անդամ եւ գործընկեր երկրների փոխգործակցության լավագույն եւ ուսանելի օրինակներից է:

Սերժ Սարգսյանը հավելել է, որ Հայաստանը պատրաստակամություն է հայտնել նաեւ մասնակցելու ՆԱՏՕ-ի «Տեւական գործընկերություն» առաքելությանը, երբ այն փոխարինի «Հաստատակամ աջակցություն» առաքելությանը: Այդ նպատակով Հայաստանը ներգրավված է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի քաղաքացիական ժամանակավոր ներկայության պլանավորման գործընթացին:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանակցային գործընթացում Հայաստանի վրա ճնշում կա

Միջազգային ճգնաժամային խումբը զեկույց է հրապարակել, որում անդրադարձել է ապրիլի 2-5-ը ԼՂ հակամարտության գոտում ծավալված մարտերին: Զեկույցի հեղինակները նշում են, որ էսկալացիայի կրկնությունը կլինի ավելի կործանարար, մասնավորապես՝ կգործարկվեն մեծ հեռահարության «Երկիր-Երկիր» դասի հրթիռներ:

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում այս կանխատեսումը բավական իրատեսական է համարում: «Իսկապես, ապրիլի սկզբի գործողությունները, պետք է ասել, որ ինչ-որ տեղ նաեւ սահմանափակ էին»,- ասաց նա՝ հավելելով, որ էսկալացիայի կրկնության դեպքում երաշխիք չկա, որ նման սահմանափակում կլինի:

Նրա խոսքով՝ քանի որ հետեւանքներն իսկապես անկանխատեսելի են ոչ միայն Հայաստանի եւ Ադրբեջանի, այլ նաեւ տարածաշրջանի համար, ուստի համանախագահող երկրները չեն ցանկանում, որ նման գործողություններ վերսկսվեն:

Անդրադառնալով Ֆրանսիայում կայանալիք Սարգսյան-Ալիեւ հանդիպմանը՝ Կիրո Մանոյանն ասաց. «Կարծում եմ՝ բանակցային գործընթացում Հայաստանի վրա ճնշում կա, եւ դրա արձագանքներն են, որ մենք հաճախ լսում ենք, թե մեզ մոտ պետք է սկսել պատրաստել, այսպես կոչված, համապարփակ պայմանագիրը, որը եթե պատրաստեն՝ առանց հիմնական սկզբունքների շուրջ համաձայնության գալու, ապա դա կլինի այս բանակցությունների տրամաբանության խախտում, ինչն անընդունելի է, եւ կնշանակի հարցի փուլային լուծում»:

Ինչ վերաբերում է հակամարտության գոտում խաղաղապահների տեղակայմանը, ապա ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատուն համարում է, որ մենք հույս չենք կարող դնել խաղաղապահների վրա. «Խաղաղապահները լավագույն դեպքում միայն կարող են ասել, թե որ կողմը խախտեց զինադադարը, դրանից ավել նրանք չեն արել որեւէ այլ վայրում»:

1in.am

ՀՅԴ-ն իր կապերն է ամրապնդում Եվրոխորհրդարանի Ընկերվարականների եվ ժողովրդավարականների խմբակցության հետ

Ստրասբուրգի Եվրոխորհրդարանի շենքում Հայ Յեղափոխական Դաշնակցության ու Եվրոխորհրդարանի Ընկերվարականների եւ ժողովրդավարականների խմբակցության միջեւ հուլիսի 6-ին կնքվել է համագործակցության համաձայնագիր: Համաձայնագիրը ստորագրել են եվրոպական նշյալ խմբակցության նախագահ Ջիաննի Փիթելլան եւ ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանը:

Համաձայնագրում, հաստատելով կողմերի միջեւ համագործակցության սկզբունքները, նշվում են նաեւ այն կատարելիք քայլերը, որոնց հիման վրա պետք է կառուցվի համագործակցությունը:

Համաձայնագրի կնքումից անմիջապես հետո Ջիաննի Փիթելլան հայտարարել է. «Հայ Յեղափոխական Դաշնակցության հետ համագործակցության այս համաձայնագրի ստորագրումը հաստատում է, որ Ընկերվարականների եւ Ժողովրդավարների խմբակցությունը լրջորեն է մոտենում Եվրոմիության հարեւան երկրներում գործող քաղաքական քույր կուսակցության հետ սերտ կապեր հաստատելու արշավին: Վստահ եմ, որ համագործակցության այս համաձայնությունը եւ այն իրողությունը, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը վերջերս իբրեւ դիտորդ մաս է կազմել Եվրոպական ընկերվարականների կուսակցությանը, պիտի ուժեղացնի մեր դիրքերը գալիք տարվա ընտրությունների ընթացքում: Սակայն ավելի կարեւորն այն է, որ մենք այս միջոցով կարողանանք նպաստել Եվրոպայում ընկերվար-ժողովրդավար ընտանիքը հզորացնելուն, որպեսզի հնարավոր լինի պայքարել ազգայնամոլության ու ծայրահեղականության դեմ, որոնք թուլացնում են ժողովրդավարական կարգերը: «Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստան» ձեր նշանաբանին խնդրում եմ ավելացրեք նաեւ Առաջադեմը»:

Նման հայտարարություն է արել նաեւ Ընկերվարականների եւ Ժողովրդավարականների խմբակցության փոխնախագահ եւ արտաքին հարաբերության պատասխանատու Քնութ Ֆլեքընշթայնը՝ շեշտելով Հայաստանում կաշառակերության եւ խտրականության դեմ պայքարում Հայ Յեղափոխական Դաշնակցության դերակատարության կարեւորությունը հատկապես հիմա, երբ կուսակցությունը երկրի իշխանության մաս է կազմում:

ՀՀ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության ղեկավար, ՀՅԴ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը հաստատել է համաձայնագրի կարեւորությունը՝ մի կողմից որպես փորձառության փոխանակման միջոց, մյուս կողմից՝ որպես եվրոպական եւ հայկական քաղաքական կուսակցությունների ճանապարհով հայ-եւրոպական հարաբերությունների սերտացման հնարավորություն:

ՀՅԴ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

Լիարժեք հաղթանակ չի կարող լինել առանց Շահումյանի եվ Գետաշենի

«Ժամանակի վկան» հայագիտական հաղորդաշարի հեղինակ Իրինա Բարսեղյան-Կրպեյանը զրուցեց ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ, 90-ական թվականներին ՀՅԴ մարտական պատասխանատու Հրանտ Մարգարյանը, ով հաղորդման ժամանակ անդրադարձավ Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմությանը, ՀՅԴ պաշտոնապես հաստատվելուն Հայաստանում, Դաշնակցական առաջին կամավորական ջոկատների կազմավորմանը, Լեռնային Ղարաբաղում, Գետաշենի ենթաշրջանում եւ Շահումյանի շրջանում ինքնապաշտպանության կազմակերպմանը եւ այլ մանրամասների:

Հայաստան գալու որոշումը կայացրել եմ 1988 թվականի առաջին ցույցերի ժամանակ: Իմ մտադրության մասին հայտնեցի ժամանակի մեր կուսակցության ղեկավարությանը, եւ 1990 թվականի սկզբին տեղափոխվեցի Հայաստան՝ իբրեւ ՀՅԴ Բյուրոյի գործիչ, բայց, միաժամանակ Ղարաբաղյան ազատամարտի մարտական գործի կազմակերպման պատասխանատվություն ունեի: Դաշնակցությունը նոր էր բացահայտվել Հայաստանում, 1990թ օգոստոսին, միաժամանակ՝ առաջին դեպքերը տեղի ունեցան Շահումյանում եւ Գետաշենում: Շահումյանի շրջանի ղեկավար որոշ անձինք դիմեցին մեզ՝ օգնության ակնկալիքով: Մենք արդեն սկսել էինք մեր կոմիտեների մակարդակով մարտական որոշ պատրաստվածություն կազմակերպելու, մարզումներ կատարելու աշխատանքները: Ձեւավորվում էին առաջին խմբերը, խմբավորումները: Առաջին խմբերը 1990թ. սեպտեմբեր 2-ին Հայաստանից մեկնեցին Շահումյան: Եթե չեմ սխալվում՝ շուրջ 40 հոգի, զինված՝ ուղղաթիռով իջան Շահումյանի անտառներում, եւ մեր առաջին հենարանը ստեղծվեց այնտեղ: Սկսեցինք Շահումյանի տղաներին մարզելու, մարզված խմբերին զինելու եւ ինքնապաշտպանությանը կազմակերպված բնույթ տալու գործը: Բայց, միաժամանակ, քաջ գիտակցում էինք, որ Շահումյանը պաշտպանելու համար մեզ անհրաժեշտ էր կազմակերպել նաեւ Գետաշենի եւ Մարտունաշենի պաշտպանությունը: Ցավոք սրտի, առաջին զոհերը, որ եղել էին Գետաշենում, շատ վատ անդրադարձ ունեցան, որի արդյունքում տեղի բնակչությունը մերժում էր որեւէ մարտական ուժի ներկայություն իր շրջանում: Դա լուրջ խնդիր էր: Թաթուլը մտավորական զինվոր էր, մտավորական ազատամարտիկ: Հիշում եմ՝ մենք զինված գնացինք Շահումյան: Թաթուլը նաեւ մի ճամպրուկ դասագրքով ուղղվեց դեպի Գետաշեն: Նա, ի զարմանս ինձ, շատ արագ գյուղում ընդունելի դարձավ, բնականաբար, դժվարությամբ, բայց դարձավ: Իբրեւ ուսուցիչ աշխատեց եւ միաժամանակ կարողացավ ձեւավորել առաջին խմբակները: Մենք ուրիշ ազատամարտիկների եւս ուղարկեցինք այնտեղ՝ իբրեւ ուսուցչի օգնական: Դրանց թվում էին Արթուր Կարապետյանը, ով զոհվեց Գետաշենում, Արամ Պողոսյանը եւ էլի երիտասարդ ուսանող տղաներ: Այդպես Գետաշենում ձեւավորվեց առաջին ինքնապաշտպանական խումբը: Առաջին գործը, որ մենք հաջողությամբ կատարեցինք, դա անթել կապն էր, ռադիոկապը կամ ռացիան, որը մի կողմից հնարավորություն էր ստեղծում կապ հաստատել Գետաշենի եւ Երեւանի, մյուս կողմից՝ Գետաշենի եւ Շահումյանի միջեւ: Երկրորդ գործը, որ կատարեցինք, Գետաշենի մոտ գտնվող Մարտունաշեն ուղարկեցինք մի նոր խումբ՝ բաղկացած հիմնականում Արաբոյի ջոկատի տղաներից, Դեդի գլխավորությամբ: Դեղը կայացած մտավորական էր, տարիքով մեծ էր, բայց, հակառակ դրան, ուներ մարտական կեցվածք. մարտական էր իր ողջ էությամբ: Գուցե կարճ ժամանակ էր սեպտեմբերից մինչեւ Գետաշենի անկումը, բայց հսկայական գործ կատարվեց: Գյուղում կամաց կամաց անհետանում էր վախի մթնոլորտը եւ հակառակ տրամադրությունն էր զարգանում՝ նրանք զգում էին, որ պաշտպանված են եւ կարող են դիմադրել: Բնականաբար, մենք կարող էինք պաշտպանվել մեր նման ուժի հարաբերությամբ, այսինքն՝ ադրբեջանցիների ուղղությամբ էր այդ պաշտպանությունը: Իսկ երբ Գետաշենի անկումը տեղի ունեցավ, արդեն միայն ադրբեջանական ուժեր չէին: Այնտեղ խորհրդային բանակն էր՝ իր ամբողջ ուժով, տեխնիկայով, հնարավորություններով, եւ կարծում եմ՝ դա էր, որ ձախողեց մեր ինքնապաշտպանության ծրագիրը:

Մենք գիտեինք, որ պետության դերը չենք կարող ստանձնել: Մենք մեր առաքելությունը համարում էինք ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը եւ Հայաստանի իշխանությանը պարտավորեցնելը, որ տեր կանգնի Ղարաբաղյան պայքարին: Դա էր մեր նպատակը, այլ ոչ թե Հայաստանի պետականությանը զուգահեռ այնտեղ ստեղծել նոր ուժի կենտրոն: Բայց այդպես էր ստացվում: Փաստ է, չէ՞, որ Ղարաբաղում բանակի կազմակերպումը ավելի արագ է տեղի ունեցել, քան Հայաստանում: Եւ այդ բանակի ակունքներում կանգնած էր Դաշնակցության մարտական ուժերի կառույցը: Ի տարբերություն մյուս առանձին ջոկատների, որ գալիս էին Ղարաբաղ ու վերադառնում էին, մենք ունեինք ընդհանուր ծրագիր: Մեկ ընդհանուր կազմակերպվածության մեջ էր դա դրսեւորվում: Առանձին ջոկատի կատարած գործողություն չէր: Կար ինքնապաշտպանության ծրագիր, կազմակերպվածություն, քաղաքականություն՝ թե ինչը ումից եւ ինչպես պետք է պաշտպանենք, ինչն այդպես չէր ուրիշ ջոկատների պարագայում:

Նախ՝ Հայաստանի իշխանության մեջ բոլորը նույն ձեւ չէին մտածում: Տարբեր էր մտածում Լեւոն Տեր-Պետրոսյանը, տարբեր էր հարցին վերաբերվում Վազգեն Սարգսյանը: Առաջին օրից մինչեւ վերջ Դաշնակցությունն ունեցել է համագործակցություն Վազգեն Սարգսյանի հետ: Այդ առումով մենք խնդիրներ չենք ունեցել, բայց ունեցել ենք լուրջ պրոբլեմներ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: 1990-ի սեպտեմբերին, երբ մեր առաջին խմբերը նոր էինք ուղարկել, Լեւոն Տեր-Պետրոսյանը դեռ Գերագույն խորհրդի նախագահ էր: Մի առիթով ինձ կանչեց եւ ասաց, որ խմբերը պետք է հետ կանչել: Ասացի՝ ինչո՞ւ, ասաց՝ դուք քաղաքական կուսակցություն եք, մարտական գործունեության իրավունք չունեք: Ասացի՝ Ֆրանսիայում էլ ունենք մարտական խումբ, հե՞տ կանչենք: Ասաց՝ ինձ չի հետաքրքրում, թե դուք Ֆրանսիայում ինչ ունեք, պատասխանեցի՝ իսկ ինչու է հետաքրքրում Ադրբեջանում ինչ ունենք: Եվ իրեն բացատրեցի, որ եթե վստահ է, որ վտանգ չի սպառնում ժողովրդի ֆիզիկական գոյությանը, թող հայտարարի, եւ մենք հետ կկանչենք, որովհետեւ մենք հիվանդ չենք, որ ծախս անենք, պատասխանատվություն վերցնենք, գործ անենք մի տեղ, որտեղ դրա անհրաժեշտությունը չկա: Իսկ եթե ժողովուրդը ֆիզիկապես վտանգված է, Աստված էլ իջնի, մենք այս ժողովրդի հանդեպ պատասխանատվություն ենք զգում եւ մեր պարտականությունը պետք է կատարենք:

Իշխանության վերաբերմունքը միանշանակ եւ միաձեւ չէր՝ մեկ, երկրորդ՝ Հայաստանի մեջ հետաքրքիր վիճակ էր: Մինչեւ օդանավակայան, եթե զենք հայտաբերեին, մեզ կձերբակալեին: Սակայն օդանավակայանում կար մի այսպիսի ներքին հասկացողություն՝ զենքով Ղարաբաղ թռնելու ազատություն ունեիր, բայց զենքով Ղարաբաղից չէիր կարող վերադառնալ: Եվ մենք զենքով չէինք վերադառնում, զենքերը թողնում, վերադառնում էինք: Բայց նաեւ պետք է ասել՝ կարող էին կանխել, սակայն կանխելու դեպքում կպայթեր հայկական իրականությունը: Այդ ժամանակ հիմնական հարցը դա էր, այսինքն՝ եթե անգամ ուզեին կանխեին, չպետք է կարողանային, որովհետեւ պահանջը մեծ էր, պահանջը կենսական էր, այնտեղ իսկապես վտանգ կար, իսկապես գյուղերը վտանգված էին: Ես համոզված եմ՝ եթե Թաթուլը չլիներ եւ Գետաշենում կազմակերպված գործը չլիներ, Գետաշենը կընկներ 90 թվականի սեպտեմբերին: Սա իրողություն է: Գետաշենի անկումը պարզապես մի գյուղի անկում չէր: Երբ Գետաշենն ընկավ, ընկան Մարտունաշենը, Բուզլուխը, Մանաշիդը, Էրքեջը, եւ վերջապես՝ ընկավ Շահումյանը, ադրբեջանցիները հասան մինչեւ Դրմբոն: Մենք ճիշտ ուղղությամբ էինք աշխատում, ցավոք սրտի՝ այդ ժամանակ մենակ մնացինք: Եւ սա տեւեց այնքան, մինչեւ Հայաստանի իշխանությունը պարտավորվեց գալ Ղարաբաղ եւ ստանձնել այդ ինքնապաշտպանական գործը՝ թեպետ արդեն ուշացած էր: Իրենց էլ չհաջողվեց, նահանջը հասավ մինչեւ Դրմբոն: Բայց հետագայում ամեն բան ճիշտ եղավ:

Թաթուլը ինքնավստահություն էր: Նրա քաջությունը, համոզումը, ինքնավստահությունը հանգստություն էր տալիս բոլորին: Ինքնավստահությունը նաեւ նրան տալիս էր հեղինակություն ունենալու իրավունք: Եվ այդ հեղինակությունն ու մտային կարողությունները իր համար կարելիություն էին ստեղծում՝ դաստիարակելու: Այն տղերքը, որ գնում էին Թաթուլի մոտ, ամենախիստ, ամենադաժան պայմանների մեջ պետք է մարտական ծառայություն անցկացնեին, բայց վերադառնում էին հիացմունքով, Թաթուլի նկատմամբ պաշտամունքով լցված, վերադառնում էին ավելի հայրենասեր, գիտակից ու կարգապահ դարձած: Իր տեսակի առավելությունը դա էր: Ցանկացած կորուստ մեզ համար դաժան է, ցանկացած կորուստ մեզ համար ցավ է: Սակայն կան կորուստներ, որոնց համար դու իսկապես շատ մեծ ափսոսանք ես զգում, որովհետեւ այդ կերպարը միայն առաջին ճակատում չէ, որ քեզ պետք է: Քեզ պետք է միշտ, ամենուր, պետական մակարդակի մեջ է պետք: Այդ տեսակը պետք է, որպեսզի մենք կարողանանք կազմակերպված, արդար հայրենիք ունենալ, ներքին հանգստություն ունենալ եւ կարողանանք զարգացում ապրել: Այդ պատճառով Թաթուլի կերպարի կորուստը մեզ համար կրկնակի, եռակի ցավ է: Թաթուլը, երբ վերջին անգամ Երեւան եկավ, մենք վիճեցինք իրար հետ: Ինքը կարծես թե նախազգում էր այդ օրերը եւ ինձնից պահանջում էր շատ ավելի մեծ ուժեր, հնարավորություններ, որ կարողանա ավելի կազմակերպված դարձնել ինքնապաշտպանությունը: Ապրիլի սկզբին մենք ունեցանք առաջին պարտիզանական, այսպես ասած՝ հայդուկային հարձակումները Խոջալուում, Լեսնոյում եւ Ղարադաղլուում: Մեր հնարավորությունները սուղ էին, չէինք կարող օգնել: Անկախ նրանից՝ ես ճիշտ եմ վարվել թե ոչ, Թաթուլի պահանջը իրական էր, կամ չափազանցված, դա ինձ մոտ խոր ցավ է առաջացրել, որովհետեւ ես չեմ կարողանում Թաթուլին հիշել՝ առանց այդ վերջին պահը հիշելու: Եվ դա դժվարացնում է ապրելը:

Համենայնդեպս, մենք՝ իբրեւ Դաշնակցություն եւ, կարծում եմ, շատ շատերը եւս, համարում ենք, որ Շահումյանն ու Գետաշենը վերջնականապես չենք կորցրել: Մենք հավատում ենք, որ մի օր կվերադառնանք, կազատագրենք Գետաշենն ու Շահումյանը: Ես տեսել եմ իմ, եւ ոչ միայն իմ անմիջական շրջապատում, որ այդ հավատն ու տրամադրությունն ուժեղ է: Ամենաածանր օրերին, երբ մինչեւ Դրմբոն գրավված էր ադրբեջանցիների կողմից, Շահումյանի անտառներում մենք հայդուկային կռիվ ծավալեցինք Շահեն Մեղրյանի գլխավորությամբ: Դրանք հերոսական գործողություններ էին: Եթե այդ համարձակ քայլը, սխրանքը, որ երեւակայությունից դուրս էր, մենք կարողացանք անել, այսօր էլ կարող ենք: Ինչո՞ւ չենք անում՝ պատասխանը ե՛ւ գիտեմ, ե՛ւ չգիտեմ: Կարծում եմ՝ շատ բան ունենք պաշտպանելու եւ փրկելու: Գուցե ճիշտ չէ, որ ամեն ինչ միաժամանակ ուզենք: Վերջապես, ամեն պահանջ էլ պետք է ծրագրված հետապնդում ունենա, ապա թե ոչ՝ կարող է արկածախնդրության նմանվել եւ անարդյունք լինել: Մենք միշտ պահանջել ենք, որ երբ խոսք է լինում տարածքների մասին, չպետք է մոռանանք Շահումյանն ու Գետաշենը, Մարտակերտի դաշտային որոշ մասեր, որոնք դեռ ադրբեջանական բռնագրավման են ենթակա: Համենայնդեպս, բանակցությունների սեղանի շուրջ մանրամասնությամբ ինչ է տեղի ունենում՝ դժվար թե կարողանամ ասել, միայն ասեմ, որ թվում է, թե այդ բանակցությունները ձախողված են, ուրեմն ձախողված բանակցությունների համար կարիք չկա, որ մենք կռիվ անենք, բայց Շահումյանի եւ Գետաշենի առաջին պահանջատերը շահումյանցիներն ու գետաշենցիները, եւ թույլ տվեք ասել՝ Դաշնակցությունն է: Նախ՝ մենք պետք է այնպես անենք, որ դա դառնա համահայկական պահանջ, որ դառնա նաեւ պետական պահանջ: Ես մի բան գիտեմ. քաղաքականության մեջ զիջումը եթե միակողմանի է եւ հեշտ է կատարվում, ոչ միայն չի կանխում դիմացինի ագրեսիան, ոչ միայն խաղաղության պահանջ չի դառնում, այլ ինքնասպանության պատճառ է դառնում: Մենք ուրիշի հողը չենք ուզում, մենք ուրիշի իրավունքը չենք ուզում, ուրիշի հարստությունը չենք ուզում: Մենք մերն ենք ուզում, եւ կարծում եմ՝ ոչ ոք իրավունք չունի դա առեւտրի եւ զիջման առարկա դարձնել: Եվ վերջապես, ինը դար հետո մենք փաստացի ունենք առաջին հաջողությունը: Այս առաջին հաջողությունը պետք է հաղթանակի վերածվի: Եվ այդ հաղթանակը պետք է լինի լիարժեք, իսկ այդ լիարժեք հաղթանակը չի կարող լինել առանց Շահումյանի եւ Գետաշենի:

Միշտ էլ կարելի է անել շատ-շատ ավելին, քան արվում է: Մեր առաքելությունը հենց դրա մեջ է, որ ուրիշները փորձել են հնարավորը կարելի դարձնել, իսկ մենք հաճախ կարողացել ենք անկարելին կարելի դարձնել: Համենայնդեպս, այն, ինչ որ մեզ խանգարեց, ռուսական ֆակտորն էր, ռուսական բանակի դերակատարությունն էր, որ ստեղծեց ուժերի անհամապատասխանելի կշիռ: Դա էր, որ մեզ ստիպեց կորուստներ ունենալ: Եթե դա չլիներ եւ եթե Հայաստանը լիներ ճիշտ ղեկավարված երկիր եւ ունենար արդեն կազմակերպված բանակ, ես հավատացած եմ՝ մենք այսօր կարող էինք Քուռ գետի ափին կանգնել: Բայց անիմաստ է սրա մասին խոսելը, ափսոս, որ մենակ էինք: Շատ-շատերը կային, ոչ դաշնակցականներ կային, որ Գետաշենի համար կռվեցին, զոհեր տվեցին, պատիվ եւ հարգանք իրենց, բայց իբրեւ կազմակերպված ուժ, ազգային ուժ, համազգային կարողություն ունեցող ուժ՝ մենք մենակ էինք, եւ դա, կարծում եմ, վերջ ի վերջո իր հետեւանքն ունեցավ:

Շահումյանի պարագայում էլ, երբ վտանգն արդեն կախված էր Շահումյանի գլխին, վերջին մեկ շաբաթը ես չեմ մոռանա: Եղանակը լավ չէր, մենք չէինք կարողանում Շահումյան գնալ, ուղղաթիռի հնարավորություն չկար: Երկու-երեք օր մեր տղերքը օդանավակայանում մնացին, չկարողացան թռչել: Որոշները դա վերագրում են ծրագրված խոչընդոտի. ես այդպես չեմ ուզում մտածել, ցավալի է, բայց Շահումյանի պարագայում առնվազն կարողացանք այդ հայդուկային կռիվը կազմակերպել, որն մեզ տվեց այն վստահությունը, որը երբ ուզենք, կարող ենք ազատագրել մեր տարածքները:

Քյաբաբ ուտելու համար Արամի տունը մի՛ քանդեք

Քանդելու ամենավատն այն է, որ գալու է մի ժամանակ, երբ քանդելու բան է՛լ չի լինելու: Իսկ երբ քանդում են քաղաքը, վատն այն է, որ ժամանակ չի գալու. քանդված քաղաքում ի՞նչ ժամանակ, ո՞ւմ համար, նրանց, ովքեր չգիտեն, թե ժամանակն ի՞նչն է: Գիտե՞ն, բա ինչո՞ւ են քանդում ժամանակը: Հա, ի՞նչ անենք, որ մենք այդ ժամանակներում չենք ապրել, կարելի է՞... Կարելի է, երբ քանդելու ժամանակներն են գալիս, ամեն բան կարելի է լինում, քանդելու ժամանակն էլ գիտե՞ք երբ է գալիս, գյադաների ժամանակից հետո, երբ այն ավարտվում է գյադաների հաղթանակով, որոնք այսուհետ իրենց զգում են քաղաքի տեր, ու քանի որ չգիտեն, թե քաղաքն ինչ է, քանդում են: Գիշերով, որ մարդ չտեսնի, կամ էլ՝ ինչո՞ւ գիշերով, ով կա՞, որ տեսնի, ջհանդամը, թե չեն տեսնի, սրանք ո՞վ են, արա՛, որ տեսնելուց հետո չթողեն, որ քանդեն, քանդեն ու քանդակեն, այնպես քանդակեն, որ քանդելու պես մի բան լինի, ամեն քանդակը քանդակագործության քանդելը լինի:

Քանդվեց Երեւանը, բայց մի՛ դժբախտացեք, իրականում Երեւանը չի քանդվել, այն պարզապես քանդվում է, դանդաղ, որ շատ չտխրենք, որ աստիճանաբար մոռանանք, կորցնենք: Արամի տունն էլ են քանդում, Արամն էլ սովորական Արամ չէ, օրինակ՝ Պետրոսյան, Արամը Մանուկյանն է: Եթե նրան չգիտեք, թուրք Վեյիբ փաշային հո գիտե՞ք: Հիշո՞ւմ եք՝ անցյալ տարի ոչ միայն հիշում էիք, այլեւ պահանջում էիք Վեյիբի թոռներ-ծոռներից: Այ այդ Վեյիբը լավ գիտեր Մանուկյանին: Չնայած ո՞ւմ ենք ասում, ինչո՞ւ ենք ասում, միեւնույն է, քանդելու են... Է, բերեք պատմության գրքերն էլ քանդենք: Հա, ի՞նչ, հանենք այդ գրքերից Արամ Մանուկյանի անունը, չի եղել այդպիսի մարդ, այդպիսի ժամանակներ, Վանի ժողովուրդ, հերոսամարտ: Գրենք՝ Վեյիբ փաշան եկավ, կոտորեց, գնաց: Կոտորվել սիրում ենք, չէ՞, կոտորվել ու քանդել: Թե չէ, ի՞նչ է ստացվում, մեր երեխաներին սովորեցնում ենք, թե Արամ Մանուկյան ենք ունեցել, ով Երեւանում ապրում էր..., բայց էլ չի ապրում, ոչ թե՝ որովհետեւ մահացել է, այլ քանի որ նրա տունը քանդել ենք, 1990-ից վթարային էր ճանաչվել, ու վերակառուցելու փոխարեն քանդել ենք: Սա ենք պատասխանելու մեր երեխայի այն հարցին, ով հայոց պատմության «Վանի հերոսամարտ» դասից գերազանց ստացած տուն վերադառնա ու մեզ խնդրի իրեն ցույց տալ Արամի տունը: Չկա այդ տունը, բալե՛ս, պապան քանդել է. պապան չի քանդել, բայց պապան ոչինչ չի արել, որ չքանդեն, ուրեմն քանդողներից մեկն էլ պապան է:

Շատ բան քանդեցինք, այնքան շատ, որ պետք է հաջորդ քանդելիքը երկար ման գալ... Առաջարկում եմ արձանները, սկզբում՝ ոչ հայերինը, բայց հայ ժողովրդի բարեկամներինը, օրինակ՝ Գրիբոյեդովի արձանը մեր ինչի՞ն է պետք: Հետո կանցնենք հայերին՝ սկսելով ամենահեռու հայից, ֆրեզնոյաբնակ Սարոյանից, իբր Կասկադի հարեւանությամբ՝ Կենտրոն տեղ կանգնել է, որ ի՞նչ անի, մանավանդ՝ երբ նրա սիրտը լեռներում է, ուրեմն բերեք արձանն էլ լեռներում դնենք, հեռու մի տեղ... Այս համատեքստում բերեք Հին Երեւանն էլ լեռներում կառուցենք, ի՞նչն է բոլ էս երկրում, լեռները՝ մեկը մյուսից բարձր: Տանենք ուրեմն Հին Երեւանը ու կառուցենք դրանցից մեկի գագաթին, անհաս մի տեղ, որ ոչ ոք չգնա, բայց ոչ թե հին Երեւանի շենքերն ամբողջական կառուցենք, այլ միայն դիմապատերը, դե, օրինակ, Արամի տան դիմապատը կառուցենք, վրան գրենք՝ «Այս պատից այն կողմ մի ժամանակ տուն էր, որտեղ մի ժամանակ ապրել է Արամ Մանուկյանը»: Ու հիշեցնենք, որ Արամ Մանուկյանը նա էր, ով ապրել է թուրք Վեյիբ փաշայի ժամանակներում...

Էս ո՞ւր ենք գնում, ժողովո՛ւրդ, ընդորում՝ մեքենայով, որ արագ հասնենք: Չէ, ես հասկանում եմ, որ քյաբաբը լավ բան է, որոշ տեղերում՝ անգամ համեղ ու իսկապես մսից, բայց կարելի՞ է ամեն օր քյաբաբ ուտել, մեքենան կանգնեցնել քյաբաբնոցի տակ գործող ստորգետնյա ավտոկայանատեղիում ու բարձրանալ քաղաք՝ քյաբաբ ուտելու: Փաստորեն, կարելի է, համենայն դեպս, մեզ ասում են, որ կարելի է, բայց դա սարսափելին չէ, մենք համաձայն ենք, որ կարելի է, սա է սարսափելին: Կարելի է քյաբաբի սիրույն զոհել քաղաքը: Համաձայն չե՞նք, անկեղծ ասած՝ ես էլ համաձայն չեմ, որ հավի քյաբաբն ավելի համով է, քան տավարինը, թեեւ վերջինս ավելի բարակ է սովորաբար լինում ու մի քանի տեղերում է, որ իսկապես տավարի մսից է լինում:

Քյաբաբն էլ իսկական՝ տավարի մսով, քանդեցինք:

Հովիկ ԱՖՅԱՆ

Ակնարկ. Ընդգծել բանակցային ռազմավարության առանցքային կետերը

Արցախյան հակամարտության բանակցային փուլերի թեւակոխումը զգալիորեն արագակշռույթ ընթացքի մեջ է: Շատ կարճ ժամանակ է իրարից բաժանում Վիեննան ու Սանկտ Պետերբուրգը, եւ հիմա էլ, ըստ երեւույթին, շուտով Սանկտ Պետերբուրգն ու Փարիզը: Վերլուծաբանական գրականությունն անընդհատ խոսում է փոխզիջումների տարբերակների, անժամկետ հանրաքվեներ կազմակերպելու, ուժերի հեռացման, տարածքների կարգավիճակի, խաղաղապահ ուժերի տեղակայման եւ լուծման հնարավոր տարբերակների մասին:

Անհասկանալիորեն հայկական մեկնաբանական դաշտը շատ հողում չի կատարում պաշտոնական Երեւանի եւ Ստեփանակերտի կողմից կատարված հայտարարություններին, ուր հիմնական առանցքային բաժին կա, որ բնութագրում է նաեւ ընդհանրապես հայկական կողմի բանակցային փիլիսոփայությունը:

Այո, փոխզիջումով է պայմանավորվում որեւէ հակամարտության լուծման հնարավորության իրականալիությունը: Մինչ այդ, սակայն, հատկապես ապրիլյան քառօրյայից հետո խիստ անհրաժեշտություն կա հետաքննական մշտադիտարկումներով երաշխավորելու 1994-ի հրադադարի պահպանումը: Ամբողջական հրադադարն է, որ մղիչ ուժ եւ բովանդակություն կարող է ապահովել, բանակցելու եւ քաղաքական կամք՝ դեպի լուծում առաջնորդելու: Եթե այս մեկը անմիջական եւ նախապայմանային հանդիպումների հանգրվան է, ապա բանակցություններին լիցք եւ բովանդակություն տալու, մանավանդ խաղաղության համաձայնագրի ուղղությամբ առաջնորդվելու համար ավելի քան անհրաժեշտ է ու պայմանական՝ Ստեփանակերտի վերադարձը բանակցային սեղան: Թե՛ հրադադարը եւ թե՛ քաղաքական մեծ համաձայնության նշումը միջազգայնորեն ունեն 1994-ի եւ 1995-ի իրար ամբողջացնող-լրացնող փաստաթղթերի մեկ ամբողջություն, որոնց տակ, Երեւանին եւ Բաքվին առընթեր, կա Ստեփանակերտի ստորագրությունը:

Պարզ է բանակցային ռազմավարության տրամաբանությունը: Նախ երաշխիքներ ապահովել՝ գործադրելու համար Երեւան-Բաքու-Ստեփանակերտով

որոշված զինադադարը, ապա ձգտել քաղաքական մեծ համաձայնության՝ ճիշտ պահին Ստեփանակերտը վերադարձնելով բանակցային սեղան եւ այն մասնակից դարձնելով համաձայնագրի կնքմանը:

Այս երկու անշրջանցելի հանգրվանների վրայից թռչելով՝ հայկական լրագրական-վերլուծական դաշտը փութկոտություն է ցույց տալիս՝ զիջումների տարբերակներ հրապարակայնացնելով՝ համոզելու ընթերցող լսարանին, թե ապրիլյան քառօրյա պատերազմից հետո հայկական կողմին պիտի պարտադրվեն միակողմանի զիջումներ:

Ստեփանակերտի իրավական մասնակցության ռազմավարական այս մոտեցումի իրողականությունը սկսել է շոշափել Բաքուն, որ Ստեփանակերտ հասկացողությանը փորձում է յուրահատուկ ընկալում ապահովել տալ միջազգային հանրությունը:

Ադրբեջանական ԱՊԱ լրատվական գործակալության հաղորդմամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Ֆրանկ Վալթեր Շթայնմայերը խոստացել է աջակցել «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք»-ի նախաձեռնությանը՝ հանդիպումներ ունենալ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության հետ:

Հանդիպումներ կազմակերպելու առաջարկը տված է «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք»-ի ղեկավար, պատգամավոր Ռովշան Ռզաեւինին:

Գործակալությունը հայտնել է, որ Շթայնմայերը Բաքվի Ռամանի ավանում հանդիպումներ է ունեցել Շուշիից Ադրբեջան հեռացածների հետ:

Շթայնմայերը հայտնել է, որ այդ առնչությամբ փորձելու է ճշտել հայ համայնքի կարծիքը:

«Մենք կձգտենք կազմակերպել նման հանդիպում»,- ասել է նա:

Դժվար թե համոզիչ լիներ այն վարկածը, որ այս մեկը «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք»-ի ղեկավարի նախաձեռնությունն է, որովհետեւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Հիքմեթ Հաջիեւը հայտարարել է, թե Շթայնմայեր-Սահակյան հանդիպումը կրել է «Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանի հայ համայնքի հետ հանդիպման բնույթ»:

Հաջիեւը հայտարարել է, որ Բաքու այցելության շրջագծի մեջ ԵԱՀԿ գործող նախագահը պիտի հանդիպի «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք»-ի ներկայացուցիչների հետ:

Շթայնմայերի այցելության ծրագրում ներառված է նաեւ ծանոթություն հարկադիր վերաբնակների համար կառուցված բնակատեղերի բնակիչների հետ:

1994-ի բանակցություններին, ըստ որոշ տեղեկությունների, ներկա է եղել նաեւ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչը, որին սակայն չի տրվել փաստաթուղթը ստորագրելու իրավունք:

Թվում է, թե Բաքուն ըմբռնել է միջազգային ընտանիքի կողմից Ստեփանակերտը իբրեւ իրավական միավոր բանակցություններում ներառելու ուղղվածությունը: Հավելյալ պատճառ՝ որ հայկական վերլուծական միտքը միակողմանի զիջումների առաջ աշխատի միջազգային ընտանիքի եւ հայկական պաշտոնական կողմի մոտեցումների համատեղման վրա եւ մնայունորեն ընդգծված պահի մեր բանակցային ռազմավարության առանցքային կետերը:

aztagdaily.com

Քառօրյա պատերազմի ամենատարեց զոհը

Քառօրյա պատերազմի ժամանակ զոհված Հրանտ Ղարիբյանի ընտանիքը Արցախյան շարժման տարիներին մազապուրծ փախել էր ադրբեջանական Միրբաշիր քաղաքից: 19 տարի Ստեփանակերտ քաղաքում վարձով ապրելուց հետո, երբ արդեն հույս չկար, որ բնակարան կստանան, վերջնական հաստատվեցին Ղարիբյանների հայրական՝ Մատաղիս գյուղում:

Հրանտ Ղարիբյանի այրին՝ Ռայա Ղարիբյանը պատմում է, որ կյանքը կարծես արդեն ընթանում էր իր բնականոն հունով: Վերահաստատվել էին ամուսնու հայրական տանը՝ Մատաղիսում, մեծ տնային տնտեսություն էին վարում, տասնյակ ծառեր էր տնկել ամուսինը:

«Ես Միրբաշիրից եմ, ամուսինս Մատաղիսից է արմատներով, սակայն Ադրբեջանում էր ապրում: 1988 թվականի Արցախյան շարժման ժամանակ նա ադրբեջանցու հետ մեքենան փոխել եւ եկել է Ստեփանակերտ. այստեղ էլ էր նա կամազ մակնիշի մեքենայի վարորդ աշխատում: Տղաներս եւ նա այստեղ՝ Ստեփանակերտում են գրանցված: 19 տարի սպասեցինք՝ տուն չկարողացանք ստանալ, եւ ետ տեղափոխվեցինք նրա հայրական գյուղ՝ Մատաղիս»:

Հրանտ եւ Ռայա Ղարիբյանները 3 զավակ՝ երկու տղա եւ մեկ աղջիկ ունեն: Ավագ որդին Ստեփանակերտում է բնակվում եւ, որպես բազմազավակ ընտանիքի հայր, երեք ամիս առաջ բնակարան ստացավ:

Փոքր որդին մոր հետ գյուղում էր ապրում. երկու զավակ էլ նա ունի:

«1992 թվականից ամուսինս զինծառայող էր: Պատերազմի ժամանակ տարբեր պաշտոններ է զբաղեցրել, իսկ պատերազմից հետո դուրս եկավ բանակից: Սակայն, երբ վերադարձանք գյուղ, նորից աշխատանքի տեղավորվեց բանակում՝ որպես կամազի վարորդ: Ես էլ եմ բանակում աշխատել. վերջին մեկ տարում դուրս էի եկել բանակից եւ մեր տնտեսությամբ էի զբաղվում»,- ասում է տիկին Ռայան:

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սովորականի պես քնած էին, երբ լսեցին առաջին կրակոցները: Սկզբից ուշադրություն չդարձրին, քանի որ մատաղիսցիները սովոր էին կրակոցների ձայներին, սակայն առավոտյան սկսվեց գյուղի հրետակոծությունը:

«Հանգիստ պառկած էինք. մտածում էինք՝ թերեւս դիրքերին են խփում, շուտով կլռեցվեն, սակայն առավոտյան 5:30 արկերը թափվեցին անմիջապես գյուղի վրա: Մեկ արկ ընկավ մեր տան հետեւը: Վեր կացանք, պատրաստվեցինք, հավաքեցինք առաջին անհրաժեշտության իրերը եւ փախանք: Ամուսինս էլ շտապեց աշխատանքի: Մինչեւ ժամը 12-ը երկու անգամ զանգեցինք: Առաջին անգամ ասաց՝ գնացի զորամաս, շուտով տուն կգնամ, տեսնեմ վիճակն ինչպես է, մյուս անգամ՝ երբ զանգեցինք, ասաց՝ դպրոցի նկուղում եմ, սակայն հետո՝ քանի անգամ երեխաներս զանգեցին, չպատասխանեց: Գնացի հիվանդանոցում գտնվող բարեկամիս տեսակցության: Երբ եկա, հարսս ասաց՝ չնայած հորդորեցին, որ քեզ չասեմ, սակայն տղաները գնացին գյուղ, քանի որ հայրիկից լուր չունեին: Գնացին, մինչեւ գիշերվա 12-ը սպասեցին, որից հետո ամուսնուս գլխատված մարմինը բերեցին»:

Որդու ընկերն ասաց, որ տեսել է, թե ինչպես է Հրանտը զինամթերք բեռնած Թալիշ բարձրանում: Իրենց սպաներից մեկի՝ Թորոյան Հայկի հետ էր: Ճանապարհին ադրբեջանցիները դարանակալել էին ու երկուսին էլ գլխատել:

1990-ականներին, երբ Թալիշն ու Մատաղիսը հրետակոծվում էին, իրենց ընտանիքը վերջինը գյուղից դուրս եկավ: Այն ժամանակ էլ Հրանտը մնաց գյուղում եւ իրենց քաղաք ուղարկեց:

Հրանտը 68 տարեկան էր, բայց շարունակում էր ծառայել բանակում:

Բացի բանակի աշխատանքից, մեծ այգի ունեին, ուր զօրուգիշեր աշխատում էր Հրանտը: Մեծ տնտեսություն էին վարում. շատ էր սիրում հայրենի գյուղն ու հողը: «Հենց այդ պատճառով էլ Ղարաբաղ՝ իր հայրական տուն վերադարձանք: Նրա բոլոր բարեկամները Ադրբեջանից Ռուսաստանի տարբեր քաղաքներ տեղափոխվեցին, եւ նրանց՝ Ռուսաստան տեղափոխվելու հորդորներին նա պատասխանում էր, որ հոր եւ մոր գերեզմանը, հայրական տունը չի թողնի նորից, օտար երկիր տեղափոխվի»,- պատմում է տիկին Ռայան:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Պետականակերտման տարիներ

/սկիզբը՝ նախորդ համարում/

Ճիշտ է, Լեռնային Ղարաբաղում Դաշնակցությունը չուներ իր լուրջ քաղաքական մրցակիցը, բայց 40.000-ից ավելի բնակչություն ունեցող Շուշիում, որից հայերի թիվը հասնում էր 22.000-ի, կային բազմաթիվ հայ մտավորականներ, որոնց մեծ մասը գաղափարական կապերով կապված էր այլ կուսակցությունների հետ: Կային Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մենշեւիկյան եւ բոլշեւիկյան թեւերին հարողներ, կային սոցիալիստ-հեղափոխականներ (էսէռներ), կադետներ եւ այլն: Հիշյալ կուսակցությունների ներկայացուցիչները եւս հետաքրքված էին ազգի ճակատագրով, եւ նման գործիչների առկայության պարագայում, երբ երկրում օրեցօր լրջացող իրադրությունը թելադրում էր վարել շրջահայաց ու հեռատես քաղաքականություն, այդ պայմաններում ժողովրդի կյանքի ու գույքի ապահովության պատասխանատվությունը չէր կարող իր ուսերին վերցնել թեկուզ ժողովրդի ընդհանուր վստահությունը վայելող մի կուսակցություն՝ իր համեմատաբար փոքրաթիվ գործիչներով: Սեփական ժողովրդի շահերը, ազգամիջյան համերաշխության պահպանման անհրաժեշտությունը պահանջում էր ընդհանուր գործի շուրջ համախմբել հասարակության բոլոր ակտիվ ու գործուն ուժերը՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից: Քաղաքական լուրջ անհրաժեշտություն էր նաեւ, որ Ղարաբաղի հայության կառավարող օրգանն իր կազմով լիներ այնպիսին, որ կարողանար հավատ եւ վստահություն ներշնչել նաեւ հարեւան մուսուլմանությանը: Այս տեսակետն ընդունվեց Դաշնակցության Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամների շրջանում, եւ հող նախապատրաստվեց Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կոալիցիոն կառավարություն ստեղծելու համար: Կարճատեւ նախապատրաստական աշխատանքներից հետո հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին Շուշիի քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները, բացի կադետներից: Որոշվեց ստեղծել միասնական իշխանական մարմին, որի կազմման համար ընդունվեց կուսակցությունների մասնակցության համամասնական սկզբունքը: Մինչ այդ տեղի ունեցած քաղաքային ինքնավարության ընտրությունները ցույց տվեցին, որ Դաշնակցությունն իրոք խոր արմատներ էր ձգել ժողովրդի մեջ: Դաշնակցությունը պիտի տար 5, իսկ մնացած կուսակցությունները՝ 3-ական անդամներ: Փոխադարձ համաձայնությամբ ընտրվեցին դաշնակցականներ Հայրապետ Մուսայելյանը, Անուշավան Մելիքյանը, Եղիշե Իշխանյանը, Հարություն Թումյանը, Ասծատուր Ավետիսյանը, մենշեւիկներ Աշոտ Մելիք-Հովսեփյանը, Լեւոն Վարդապետյանը, Նիկոլայ Իսախանյանը, էսէռներ Հռիփսիմե Մելիք-Հովսեփյանը, Արամ Միքայելյանը, Ալեքսանդր Մելքումյանը, բոլշեւիկներ Ալեքսանդր Ծատուրյանը, Արմենակ Ղարագյոզյանը եւ Մելիքսեթ Եսայանը: Արցախի կառավարման այս մարմինը կոչվեց «Հայ հեղափոխական կուսակցությունների եւ կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ», որը սկզբում բաղկացած էր 14 հոգուց, բայց մի 2 օրից բոլշեւիկ անդամները ինչ-ինչ պատճառներով հրաժարվեցին մասնակցել: Այդպիսով, խորհրդի մեջ մնացին մյուս 3 կուսակցությունների ներկայացուցիչները՝ թվով 11 հոգի: Խորհրդի նախագահ ընտրվեց Հայրապետ Մուսայելյանը, քարտուղար Նիկոլայ Իսախանյանը: Ստեղծված խորհուրդը հետագայում սկսեց կոչվել Միջկուսակցական բյուրո եւ այդ անունով էլ հայտնի դարձավ Ղարաբաղում:

Ղարաբաղում գլուխ էր բարձրացրել անարխիան, տեղական իշխանությունները կորցրել էին իրենց հեղինակությունը: Այս պատճառներով որոշվեց հրավիրել ազգամիջյան մարմին՝ բաղկացած 13 անդամներից՝ 6 հայ, 6 թուրք եւ 1 չեզոք անձ, որը եւ պիտի լիներ կոմիտեի նախագահը: Կողմերի համաձայնությամբ՝ նախագահ ընտրվեց ազգությամբ վրացի, Շուշիի նախկին հաշտարար դատավոր Իոսիֆ Կոբիեւը: Սակայն այս մարմինը երկար կյանք չունեցավ եւ 1918թ. ապրիլին դադարեցրեց իր գործունեությունը:

Միջկուսակցական բյուրոյի առաջնահերթ խնդիրն էր վերջ դնել քաղաքում եւ շրջաններում տիրող անիշխանական վիճակին, պաշտպանել հայ եւ թուրք ժողովուրդների համերաշխությունը:

Ինչպես նշում է դեպքերի ժամանակակից Եղիշե Իշխանյանը, Միջկուսակցական բյուրոյի գործունեության ընթացքում մենշեւիկների կողմից առաջարկ եղավ, որ Դաշնակցությունը մեն-մենակ ստանձնի Ղարաբաղի հայության ղեկավարությունը, իսկ իրենք ենթակա լինեն կուսակցության կարգադրություններին, ինչպես շարքային դաշնակցականները: Մենշեւիկներն այդ առաջարկն արել էին Սահմանադիր ժողովի եւ Շուշիի քաղաքային ինքնավարության ընտրություններին Դաշնակցությանը տրված քվեները հաշվի առնելով (85%-ից ավելին), սակայն ՀՅԴ-ն, հավատարիմ մնալով միջկուսակցական խորհրդակցական ժողովում կայացած համաձայնությանը, մերժեց այդ առաջարկը եւ գիտակցաբար չցանկացավ մենատիրություն անել:

Հետագայում «Միջկուսակցական բյուրոն» վերանվանվեց «Կոմիսարների խորհուրդ», որը շարունակեց իր գործունեությունը մինչեւ արցախահայության առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1918թ. հուլիսի 22-26-ը: «Հայ հեղափոխական կուսակցությունների եւ կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»-ի 8 անդամներից 4-ը դաշնակցականներ էին (Հայրապետ Մուսայելյան, Հարություն Թումյան, Ասծատուր Ավետիսյան, Արտաշես Պետրոսյան), 2-ը մենշեւիկ (Արսեն Բակունց, Աշոտ Մելիք-Հովսեփյան), 2-ը սոցիալիստ-հեղափոխական (Արամ Միքայելյան, Ռուբեն Տեր-Գասպարյան):

Փաստորեն, Լեռնային Ղարաբաղում ստեղծվեց կոալիցիոն կառավարություն, որը նպատակային քաղաքականություն սկսեց վարել երկրի տնտեսական, քաղաքական, ինքնապաշտպանական, սոցիալական հարցերի լուծման ուղղությամբ:

Այսպիսով, Արցախում նշված ժամանակաշրջանում քաղաքական հիմնական շարժիչ ուժը հանդիսանում էր ՀՅ Դաշնակցությունը: Մյուս՝ քիչ թե շատ ազդեցիկ քաղաքական ուժը բոլշեւիկյան կուսակցությունն էր, սակայն այն միայն մասամբ կարելի էր հայկական համարել, քանի որ այն ռուսական համանուն կուսակցության հայկական հատվածն էր եւ ոգեւորված էր համաշխարհային հեղափոխության գաղափարներով: Ռամկավարները, սոցիալ-դեմոկրատները եւ հարակից տարբեր կուսակցությունները գոյություն ունեին անհատապես եւ լուրջ քաղաքական հոսանքներ չէին կարող համարվել: Ուրեմն, Դաշնակցությունը մնում էր միակ քաղաքական ուժը, որ կենդանի էր պահում Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի նշանախոսքը: Արցախում նշված ժամանակաընթացքում միակ գերիշխող քաղաքական ուժը Դաշնակցությունն էր, բայց, չնայած այդ հանգամանքին, ոչ մի դեպքում մենակ չէր գործում եւ դեմ էր միահեծանությանը:

ՀՅԴ Արցախի կառույցը, իր շուրջը համախմբելով հասարակության լայն շերտերին, Լեռնային Ղարաբաղում նորից վերակերտեց հայոց պետականությունը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Մտորումներ կյանքի եւ թատրոնի մասին երիտասարդ ռեժիսորի հետ

Արցախյան թատրոնի մասին սիրում են ավելի շատ խոսել միջին կամ միջինից բարձր տարիքի մարդիկ. նրանք, ովքեր ականատես են եղել թատրոնի վերելքին՝ հրաշալի բեմադրությունների, ժողովրդի կողմից մեծարման, իշխանությունների կողմից առավել ուշադրության կենտրոնում գտնվելուն: Խորհրդային տարիների արցախյան թատրոնի վերելքին հաջորդեցին Արցախյան գոյամարտի տարիները, որի ժամանակ ռեժիսորները շարունակում էին թափվող արկերի տակ բեմադրություններ դնել, դերասաններն էլ իրենց բացառիկ խաղով՝ գոնե հաշված րոպեներով փոքրինչ կտրել հանդիսատեսին դաժան իրականությունից՝ տանելով նրան մեկ այլ, միգուցե ավելի լավ աշխարհ:

Այսօր Ստեփանակերտի «Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոն»-ը վերանորոգման խիստ կարիք ունի: Չնայած այն հանգամանքին, որ շենքում ներկայացումներ չեն բեմադրվում, թատրոնը շարունակում է գործել՝ ներկայացումներով հանդես գալով Ստեփանակերտի այլ, շատ հաճախ դերասանների համար ոչ հարմար բեմերում:

Ստեփանակերտի «Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոն»-ից բացի Արցախում գործում են համեմատաբար ավելի երիտասարդ թատրոններ եւ թատերական խմբեր, որոնք իրենց գործունեության կարճ ժամանակահատվածում կարողացել են իրենց ասելիքը ներկայացնել եւ սիրելի դառնալ հանդիսատեսին:

Երիտասարդ ռեժիսոր Վլադիմիր Գեւորգյանը 4 տարեկանից բեմում է: Մոր՝ ռեժիսոր Լաուրա Հովսեփյանի բեմադրած «Տմբլաչի Խաչան»-ը նրա թատերական կյանքի սկիզբն էր: Հետագայում Տմբլաչի Խաչանին մարմնավորած պատանին դարձավ Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի դրամատիկական թատրոնի ռեժիսորական բաժնի ուսանող, իսկ ուսումն ավարտելուց հետո՝ Շուշիի «ՆԱՄ» թատերական խմբակի ղեկավար: Արդեն 9 տարի է՝ ղեկավարում է Շուշիի «Նարեկացի» արվեստի միության թատերախումբը, անցած տարվանից նաեւ «Մկրտիչ Խանդամիրյանի անվան պետական թատրոն»-ի ռեժիսորն է: Նրան ճանաչողները գիտեն՝ միայն թատրոնը չէ նրան գրավում: Երաժշտության, լուսանկարչության եւ բազում այլ բնագավառներում նա իր փորձերն է կատարել, եւ չի բացառում, որ կարող է վերադառնալ այդ բնագավառներ, կամ էլ՝ այլ ոլորտներում իրեն փորձել:

Խոսելով Շուշիի «Նարեկացի» արվեստի միության թատերախմբի մասին՝ երիտասարդ ռեժիսորը նշեց, որ սկզբից փոքր էտյուդներ էին բեմադրում, այնուհետեւ՝ մեծ ներկայացումներ: Թատերախումբը կազմված է 4-13 տարեկան պատանիներից, որոնք, բացի մանկական ներկայացումներից, շատ հաճախ խաղում են ավելի լուրջ ներկայացումներ:

Ամեն ներկայացման մեջ տարբեր թվով երեխաներ են ընդգրկվում, նոր կերպարների համար հաճախ նոր դերասաններ են ներառվում, սակայն կա թատերական խմբի կորիզ, որը գրեթե անփոփոխ է լինում:

Շուշիի «Նարեկացի» արվեստի միության թատերական խումբը բազմիցս մասնակցել է փառատոնների ինչպես հանրապետությունում, այնպես էլ հանրապետությունից դուրս՝ գրավելով պատվավոր տեղեր: Վլադիմիր Գեւորգյանի կողմից բեմադրած «Սիրաշեն եւ Ոսկեշեն» ներկայացումը Արցախի ինքնագործ խմբերի հանրապետական ստուգատեսում առաջին տեղ է զբաղեցրել, իսկ «Ազգային թատերական ստեղծագործական միավորում փառատոնի» կողմից արժանացել է երկրորդ մրցանակի, որը հանձնվել է գումարի տեսքով՝ օգնելով նոր ներկայացումներ բեմադրելու գործին: Թատերախումբը բազմիցս մասնակցել է «Նռան հատիկ» փառատոնին՝ զբաղեցնելով պատվավոր տեղեր:

Վլադիմիր Գեւորգյանի խոսքերով՝ հաճախ երեխայի միջոցով է հաջողվում մեծերին հասցնել կյանքի որոշ ճշմարտություններ:

«Մեր հանդիսատեսը տարիքային սահմանափակումներ չունի: Մեր թատերախմբի դերասանները չնայած պատանիներ են, սակայն հանդիսատեսը կարող է լինել ցանկացած տարիքի մարդ: «Սիրաշեն եւ Ոսկեշեն» ներկայացումը հենց այն ներկայացումներից է, որը վերաբերում է բոլորին՝ մեծից փոքր, հարուստից աղքատ»,- ասում է:

Ներկայացումը հարուստի եւ աղքատի, բարու եւ չարի համեմատություն է, որի ողջ ընթացքում յուրահատուկ զուգահեռներ է անցկացվում մարդկային կարեւորագույն արժեքների, մարդկանց բարի եւ չար արարքների, նյութական եւ հոգեւոր արժեքների, գթասրտության եւ անտարբերության միջեւ: Իսկ վերջում հայտնվում է Քրիստոսը, ով գալիս է իր դատաստանը տեսնելու:

«Չնայած մանկական ներկայացում է, սակայն մեծերն էլ էին սիրով գալիս: Մանկական է այն առումով, որ ճշմարտությունը ներկայացվում է երեխայի շուրթերով: Ներկայացումը ե՛ւ հոգեւոր, ե՛ւ աշխարհիկ կարելի է համարել: Քրիստոսի գալուստն ու դատաստանը ներկայացման վերջում ցույց են տալիս, որ մարդը, միեւնույն է, մի օր հատուցելու է իր կատարած բարու եւ չարի համար: Ներկայացման ամենակարեւոր ասելիքն էլ այն է, որ անտարբերությունը կարող է ծնել նոր, ավելի անդառնալի մեղքեր: Անհրաժեշտ է պարզապես գթասիրտ եւ հոգատար լինել քեզ շրջապատող ամեն ինչի նկատմամբ»,- բացատրում է ռեժիսորը:

Անցած տարվանից Վլադիմիր Գեւորգյանը նաեւ Շուշիի «Մկրտիչ Խանդամիրյանի անվան պետական թատրոն»-ի ռեժիսորն է:

Այսօր թատրոնն ունի ընդամենը 8 դերասան, ովքեր, ռեժիսորի խոսքերով, բավականին հմուտ են իրենց մասնագիտության մեջ, սակայն անհրաժեշտություն կա նաեւ նոր դերասանների:

«Լավ որակի եւ քանակի դերասանների անհրաժեշտություն կա: Այո՛, ես եմ ներկայացման սյուժետային գիծը տանողը, սակայն ես չեմ այնտեղ տնօրենը: Ես էլ եմ դերասաններից շատ բան սովորում: Եթե դերասանը լավն է լինում, նա գույներ է հաղորդում ներկայացմանը»:

Հարցին, թե թատրոնը մեր ժամանակներում որքանո՞վ է մնում պահանջված, երիտասարդ ռեժիսորը պատասխանում է, որ դա միմիայն կախված է ներկայացման որակից:

«Թատրոնը հոգեւոր սնունդ է, աշխարհիկ հոգեւոր սնունդ: Ես հավատացած եմ, որ ամեն մարդու էլ անհրաժեշտ է այդ սնունդը: Իսկ համացանցի միջոցով այն չես կարող հագեցնել: Չնայած ոմանք ասում են, որ թատրոնը մեռնում է, սակայն թատրոնը հազարամյակներ շարունակ գոյություն է ունեցել եւ կունենա: Այսօր զարգացած երկրներում մեծ տեղ են տալիս թատրոնին, քանզի այն իրենից նաեւ ներկայացնում է ուժ եւ զենք: Ինչպես ցանկացած լավ լրատվամիջոց համարվում է չորրորդ իշխանություն, այնպես էլ թատրոնն է իշխանություն՝ արվեստի լեզվով»:

Ռեժիսորի խոսքերով՝ այսօր Արցախում թատրոնը հետին պլան է մղվել, քանի որ ավելի կարեւոր հարցեր կան:

«Խորհրդային տարիներին թատրոնին մեծ տեղ էին տալիս, որովհետեւ մարդիկ անհոգ էին, չէին մտածում պատերազմի, սահմանի լարված վիճակի մասին: Այժմ ավելի առաջնային խնդիրներ կան՝ ապահովություն, անվտանգություն: Ես դրա համար ոչ մեկին չեմ մեղադրում: Այսօր կյանքի եւ մահվան հարց կա»:

Վլադիմիրի հաջողված բեմադրություններից է Չեխովի «Առաջարկություն»- ը, որը եւս լայն արձագանք է գտել եւ սիրվել հանդիսատեսի կողմից:

«Առաջարկություն» բեմադրության համար «Արտավազդ» ամենամյա թատրոնի մրցանակաբաշխությանը, որպես երիտասարդ ռեժիսոր, նա արժանացել է պատվոգրի:

«Երբ պատվոգիրը ստանալու համար ինձ բեմ հրավիրեցին, պլանավորել էի խոսել Շուշիի թատրոնի մասին՝ ինչ առաջխաղացումներ կան, ինչի անհրաժեշտություն կա, ինչ ծրագրեր ունենք, սակայն երբ բեմ բարձրացա, ինձնից անկախ երեք նախադասություն ասացի՝ շնորհավորում եմ բոլորին, շնորհակալություն եմ հայտնում, եւ թող պատերազմ չլինի, որ մենք էլ կարողանանք ստեղծագործել: Երեք օր հետո սկսվեցին ապրիլյան դեպքերը...»:

Մի պահ լռություն է տիրում, այնուհետեւ խախտում եմ լռությունը՝ հարցնելով, թե հնարավո՞ր է մի օր ներկայացնի թատրոնի բեմին հենց ապրիլյան օրերի մասին պատմող որեւէ դրված: Պատասխանում է. «Ապրիլից հետո ստեղծագործելը դժվարացել է. ուզում ես այնպիսի թեմա ընտրել ներկայացման համար, որ սրտիդ հոգեհարազատ ու համահունչ լինի, միաժամանակ՝ համահունչ նաեւ այսօրվա մեր իրականությանը: Իսկ ինչ վերաբերում է այդ դեպքերը կամ դրվագները բեմադրելուն, ապա այժմ՝ միանշանակ ոչ: Այնտեղ ինչ-որ տեսա, մեջը ոչ մի լիրիկա չկար... Սովորաբար, միշտ դիտում ես պատերազմական ֆիլմեր, կարդում ես գրքեր, որոնց մեջ լիրիկա կա, բայց ես այնտեղ լիրիկա չտեսա: Մահվան մեջ ոչ մի լիրիկա չկա, դաժանության մեջ լիրիկա չկա: Միգուցե ինձ մոտ դեռ թարմ է ամեն ինչ եւ որոշ ժամանակ անց այլ կերպ կընդունեմ դա: Գիտեք՝ ամեն բան սովորեցնում է կյանքը: Հիմա ձեզ հետ խոսում եմ, մի բան սովորում եմ, միգուցե դուք էլ մի բան ինձնից եք սովորում: Պատերազմն էլ գո՞ւցե սովորեցնում է: Գո՞ւցե ամրապնդում է մեջս այստեղ մնալու ցանկությունը: Գո՞ւցե ինձ ավելի հայ է դարձնում, ով իրեն իր հողում է տանը զգում...»:

Նորից դադար: Ակամայից հիշում է Շուշիի տղաներին՝ Ընկածներին, նրանց, ում հետ միասին էր այդ օրերին, ում մահը, թերեւս, մինչեւ հիմա չի ընդունել:

Այդ պահին կարծես ճիշտ ժամանակին մեկը գալիս է եւ, խախտելով լռությունը, հարցնում է՝ թատերական խմբակ ընդունվելու համար թղթերս որտե՞ղ պիտի հանձնեմ: Ռեժիսորը ցույց է տալիս տեղը եւ փոխելով թեման՝ շարունակում. «Զարմանալի երեւույթ է՝ այս տարի շատերն են ցանկանում թատերական խմբակ հաճախել: Մի քանի տարի առաջ շատերին համոզելով էինք բերում»: Այնուհետեւ ավելացնում է. «Պետք է խոստովանեմ, որ երեխաների հետ այնքան էլ հեշտ չէ աշխատելը, սակայն արդյունքը երբ տեսնում եմ, մոռանում եմ դժվարությունների մասին»:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Գյուղական պատկերներ հեռու-մոտիկ մարդկանց համար

Գյուղամիջի ճանապարհները խորդուբորդ են, կիսաքանդ, բայց գյուղացիներն արդեն հարմարվել են, գիտեն՝ տարվա եղանակներին մեքենայով որ, իսկ ոտքով գյուղի որ մասով պետք է գնալ, գիտեն՝ որ մասն է, որ ոչ մի եղանակի գնալու չէ: Վա՛յ այն վարորդին, ով առաջին անգամ, այն էլ անձրեւների ժամանակ, հայտնվելով գյուղում՝ բախտի չբերմամբ կգնա սխալ ճանապարհով, այդ դեպքում… Այդ դեպքում՝ ոչինչ, սարսափելի չէ, օգնության կգան գյուղի տղամարդիկ եւ հնարավորիս կօգնեն տուժածին, «ցեպ» կկապեն, կձգեն ու կհանեն, վերջում էլ մի տղամարդ կավելացնի.

- Է՛, բա սա երկիր է, մեկը չկա՝ մտածի էս գյուղի մասին, ճանապարհ շինի… անտեր ենք, անտե՛ր…

Մեկ ուրիշն էլ կասի.

- Հրե՛ն, էնքան մեծահարուստներ կան գյուղից, դրսերում հարստացել են, գյուղի մասին չեն էլ մտածում, Է՛հ…

Գյուղի տղամարդիկ հիմնականում 40-50-նն անց են, իսկ ջահելնե՞րը՝ կհարցնեք, կպատասխանեն.

- Տո ջահե՞լ է մնացել, ջահելներից շատերը դասատուներ են, դե դպրոցն էլ աշակերտներ քիչ ունի, էս տարի էլ առաջին դասարան եկող չկա:

- Խեղճ դասատուներ, դրանց գործն էլ որ կրճատվեց՝ կթողնեն կգնան,- կասի մյուսը:

Իսկ մեկ ուրիշը կողքից, մատը վերեւ տնկելով, կշեշտի.

- Բա որ իրենց երեխաները լինեն՝ կթողնե՞ն, որ անգործ նստեն…

Դպրոց տանող ճանապարհին մի քանի խոզ քանդում են չեղած ճանապարհը եւ հավեսով խռխռացնում՝ ասես ասելով՝ աշխարհի դարդը վեջներս չէ, մենք մեր խոզոտ գործն ենք անում, մեկ է՝ մեզ խանգարող չի լինի…

Իրենց գործով զբաղված խոզերից քիչ այն կողմ մի տղամարդ մեքենայի մեջ հավի ճտեր է վաճառում: Մի քանի՝ միջին տարիքի կանայք հերթով կանգնել են, մի տարեց կին էլ կողքներին քթի տակ փսփսում է.

- Է՛, ձեզ կին ասողի ինչն եմ ասել, բա մի հավը ի՞նչ է, որ ալարում եք թուխս դնել, հալալ-զուլալ ճտեր ստանալ, թե չէ էդ «կարմիտ արած» ճտերն ի՞նչ է, որ առնում եք: Հեշտ կողմը վերցրել եք: Էսա կտեսնեմ ոնց եք պահելու էտ «գարադսկոյ» ճտերին. ամեն օր մեկը կսատկի…

- Ի՞նչ ես խոսում, բան ունես ասելու՝ բարձր ասա,- կասի կանգնած հարսերից մեկը:

- Ոչ մի բան էլ չեմ ասում, ձեզ հետ խոսել կլինի՞…

Մինչեւ դպրոց հասնելը մի քանի թոնիր կա՝ տներին կից: Թոնիրների դռները փակ են, եւ երեւում է, որ երկար ժամանակ է՝ բացող չի եղել: Որտե՞ղ եք հացը թխում հարցին՝ նույն՝ քթի տակ փսփսացող տարեց կինը կպատասխանի.

- Ի՞նչ հաց թխել, ի՞նչ բան, գյուղի մեծ մասը «քաղաքի» հաց է գնում խանութից, մի մասն էլ «դուխոպկում» է թխում. քչերն են թոնիր վառում, էն ղոչաղները:

Դպրոցը փոքր է, բայց դպրոցի բակում երեւացող երեխաների թվից երեւում է, որ այն անգամ մեծ է այդքան քչաթիվ երեխաների համար: Դպրոցի մուտքին բարերարի անունն է, ազգանունը: Դե բարերարը դպրոցը սարքեց, հո մեկ էլ չի՞ նստելու մտածի, թե ինչ անի, որ երեխաները չգնան գյուղից, մնան, դպրոց հաճախեն. դա էլ համապատասխան անձինք թող մտածեն…

Ուսուցիչները կբողոքեն.

- Դասագրքերը բարդ են կազմված, երեխաները դժվար են հասկանում:

Մի ուրիշն էլ՝ տարրական դասարանի դասվար, կասի.

- Մի երեխա է դասարանում, ամեն օր իրար երեսի նայում ենք ու ձանձրանում: Վերապատրաստման դասընթացների եմ գնացել էս տարի…

- Մի ժամանակ դպրոցը 150 աշակերտ ուներ, կողքի գյուղերից էլ էին գալիս: Հիմա, իրար գլխի տված, կողքի գյուղի հետ, 40 աշակերտ է,- կշարունակի մյուս դասվարը:

- Էտ 40-ը դեռ լավ է, կողքի գյուղում սկի էտ էլ չկա:

Այդ պահին զանգը կհնչի եւ երեխաները կվազեն դասարաններ. կտիրի համակ լռություն եւ լռության մեջ, դպրոցի զանգի երկար լարից կախված կմնա մի հարց՝ իսկ ի՞նչ է լինելու մի քանի տարի հետո…

Դպրոցից քիչ այն կողմ փոքրիկ մթերային խանութը միակն է գյուղում: Մի կին կամաց կբացի խանութի դուռն ու ներս կմտնի՝ ձեռքերը գոգնոցի տակ դրած: Հետո կլսվի նրա ու խանութպանի խոսակցությունը.

- Էս անգամ էլ պիտի տաս, ուրիշ ձեւ չկա:

- Բա մարդդ փող չի՞ բերել, հրեն «Փլան» հարուստի ոչխարներն ու այծերն է պահում, պահակություն անում գիշերները:

- Բերել է, քեզ մատաղ, բայց դե երեխաս ուսանող է քաղաքում, գիտես, ուսման վարձն ու տան վարձն ենք ուղարկել:

- Է՛, էտ ի՞նչ է կարդում որ:

- Իրավաբանականի 3-րդ կուրսը էս տարի կավարտի:

- Հա՛, գյուղում լավ կդասավորվի՝ երեւի որպես գյուղապետարանի իրավաբան, չէ՞,- քահ-քահ ծիծաղելով՝ գլուխը կտարուբերի խանութպանը:

- Այ մարդ, գալիս է գյուղ ի՞նչ անի, կատակներդ քեզ պահիր… Շուտ արա, լավ, 5 կիլոգրամ պեսոկ տուր՝ գնամ. բա բերքս փչանա՞, գոնե մուրաբա եփեմ:

- Է՛… էս անգամ էլ տվի, բա հետո՞ է, էս պարտքերի ցուցակը ի՞նչ անեմ, այ տնաշեն…

Երեկոյան գյուղամիջում կհավաքվեն գյուղի եղած տղամարդիկ, նրանց հետ՝ մի քանի ջահելներ: Տարեցները կասեն.

- Գոնե գյուղում մի նորմալ տեղ լիներ, էս ջահելները հավաքվեին, մի խելքը գլխին բանով զբաղվեին: Մեր ժամանակ գյուղում գոնե ակումբ կար, ներկայացումներ էին լինում, թատրոն-համերգներ էին կազմակերպվում, դրսից մարդիկ էին հրավիրում…

Մեկ ուրիշն էլ թե.

- Ամառները գյուղը «դաչնիկներով» էր լցվում, շունը տիրոջից չէր ջոկվում: Հիմա չեն գալիս, բոլորի ոտքը գյուղից կտվել է:

- Հիմա ծով են գնում, ծո՛վ, պա՛հ-պա՛հ…

- Ա, մի ծովն ի՞նչ է, որ չունենք աշխարհի երեսին,- կկատակի ջահելը:

- Գյուղ կա՝ սկի ջուր չունի, ժամով են բաց թողում, ո՞ւր մնաց՝ ծո՛վ…

Արեւը կթեքվի դեպի մայրամուտ: Առաջվա պես հանդից տուն դարձող, սկիզբն ու վերջը չերեւացող ոչխարի հոտ չի երեւա: Գյուղում միայն մի քանի հոգի են ոչխար պահում… Ոչխարների բառաչի փոխարեն կտիրի դարձյալ նույնը՝ լռություն…

Թեքվող արեւի հետ օրը կմոտենա գիշերվան, որպեսզի հաջորդ առավոտ նորից արեւ լինի, նորից նոր օր բացվի, որ… նորից այնտեղ՝ գյուղից հեռու, փողկապով տղամարդիկ բարձր ամբիոններից ասեն.

- Մեր երկրի ապագան սկսվում է գյուղից, զարգացած գյուղ՝ զարգացած երկիր…

Հ.Գ.- *Հա, մոռացա. վերջում կհարցնեք՝ բա ո՞ր գյուղի մասին էր խոսքը: Ես չեմ պատասխանի, կթողնեմ, որ ամեն մեկն այն համեմատի իր գյուղի հետ, գուցե մի քանիսի մոտ ինչ-որ համընկնումնե՞ր կլինեն…*

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Պատերազմի ելքը ուղիղ համեմատական է տնտեսությանը

Հայությունն, արդեն երրորդ սերունդն է, որ ներքաշված է պատերազմի մեջ: 1991 թ. մայիսին «Օղակ» օպերացիայի հետեւանքով անհայտ կորել է հայրս, հարազատներիցս երկուսը զոհվել են 1992թ., եւ այսպես՝ ինձ նման շատերը:

Ինչ եմ ուզում ասել: Մենք դեռ երկար կմնանք պատերազմական գոտում, քանզի թշնամին չի ընդունում իր պարտությունը, չի հաշտվում Ղարաբաղը մեկընդմիշտ կորցնելու մտքի հետ: Ուրեմն՝ այս վիճակը դեռ երկար կշարունակվի:

Մենք սակավ հնարավորությունների տեր երկիր ենք: Ուստի, եղած՝ թե՛ մարդկային, թե՛ տնտեսական ռեսուրսները պիտի տեղին օգտագործենք: Պատերազմից հետո Հայաստանը իր ժողովրդին կերակրելու խնդիր ուներ, եւ սկսեցինք զբաղվել գյուղատնտեսությամբ: Բահ վերցրին գյուղացին, գիտությունների թեկնածուն, ինժեները, արվեստագետը, չգիտեմ՝ էլ ով… Որոշ գիտնականներ էլ տեսան, որ իրենց գիտական միտքը չի գնահատվում, ապրուստի միջոց չի դառնում, թողին-հեռացան երկրից: Ու այժմ ուրիշ երկրներ են զորացնում իրենց գիտելիքներով: Ցավալի է, որ բարձր ինտելեկտի տեր հայն ստիպված էր ցածր աշխատանք անել: Քավ լիցի, ես չեմ թերագնահատում գյուղատնտեսության կարեւորությունը: Ավելին, շրջափակման մեջ գտնվող հայության համար հացի խնդիրը ռազմավարական նշանակություն ունի: Ու նաեւ արտահանման կարեւոր բաղադրիչ է գյուղատնտեսությունը: Բայց այդ մասին չէ խոսքս:

ՀՀ-ն Խորհրդային Միության ամենահնդուստրիալ հանրապետություններից էր՝ Մերձբալթիկայի երկրներից հետո: Ո՞ւր մնաց այդ բարձր ինտելեկտը: Ինտելեկտի այդ նույն բարձր մակարդակն այսօր էլ պետք է ավելի, քան երբեւէ: Մենք պետք է գիտության այնպիսի ճյուղեր զարգացնենք, որոնք ե՛ւ տնտեսությունը կզարգացնեն, ե՛ւ փող կբերեն մեզ, եւ՛ կօգնեն վերազինել մեր պաշտպանական համակարգը: Մեր ապագան այսպիսին պետք է լինի՝ քիչ ներդրումներով հասնել բարձր ցուցանիշների՝ օգտագործելով մեր մտավոր կարողությունները պահանջարկ վայելող ասպարեզներում, ճշգրիտ տեխնիկա արտադրելով, որն առաջ կտանի տնտեսությունը: Հայաստանը պիտի վերականգնի ինդուստրիալ երկրի նախկին փառքը:

Հենց այսօր մենք ունենք համակարգչային ծրագրավորողների մեծ բանակ, որոնք դրսի համար պատվերներ են կատարում: Ռոբոտաշինությունը պետք է կոնկրետ կիրարկում ունենա ռազմական արդյունաբերության մեջ:

Խորհրդային տարիներին Հայաստանը «Երազ» մակնիշի միկրոավտոբուսներ էր արտադրում: Ունեինք քիմիական, հաստոցաշինական արտադրություն Երեւանում, Վանաձորում, տրիկոտաժի արտադրամասեր՝ Երեւանում, Գյումրիում, Գորիսում, կոշիկի հանրահայտ «Մասիս» ֆիրմա ունեինք: Ստեփանակերտում կոնդենսատորների գործարան կար, որտեղ աշխատում էր ավելի քան 1000 բանվոր: Գործարանը կոնդենսատորներ էր արտադրում ավիացիայի, գունավոր հեռուստացույցերի համար: Գործում էին հայտնի Ղարմետաքսկոմբինատը, էլեկտրատեխնիկական գործարանը, կոշիկի ֆաբրիկան եւ այլ արտադրական ձեռնարկություններ: Այդ ամենը պետք է աստիճանաբար վերականգնել ու դնել ժամանակակից ռելսերի վրա:

Իսկ գյուղատնտեսությունն աշխատատար է, բայց քիչ եկամուտներ բերող: Թող դա էլ լինի, բայց հիմնականը ժամանակակից պահանջարկ վայելող տեխնիկական արտադրամասերը վերազինելն ու ընդարձակելն է: Քանի որ աշխարհը դրա պահանջարկն ունի: Իսկ մենք ունենք այդ ամենն իրականացնելու կարողություն: Հարցը ճիշտ ռազմավարության մեջ է, լավ մարքետինգի մեջ, այսինքն՝ շուկայի ներկա շրջանակներում տեղավորվելու մեջ:

Ռոբոտաշինությունը պետք է օգտագործվի ե՛ւ արդյունաբերության մեջ, ե՛ւ պաշտպանական նպատակներով, ե՛ւ, ինչու չէ, արտահանման նպատակով:

Ցանկալի է այսպիսին տեսնել ժամանակից Հայաստանը եւ ոչ թե կռացած մեջքով հողի հետ կռիվ տալիս, քանի որ պատերազմի ելքը վաղուց արդեն ժամանակակից զինտեխնիկան է որոշում՝ ոգուց բացի: Զինվորի զորավարժության աստիճանը, մարտունակության ժամանակակից մակարդակը, պատերազմ վարելու նոր մարտավարությունը: Իսկ պատերազմ վարելը ներդրումներ է պահանջում: Սա է մեր իրականությունը:

Հակամարտող կողմերի նախագահների վերջին հանդիպումները Վիեննայում, Սանկտ Պետերբուրգում, մշտադիտարկման մեխանիզմի տեղադրումը սահմանին ոչինչ էական չեն տա: Ադրբեջանն այն պետությունը չէ, որի հետ կարելի է նստել բանակցելու: Իսկ ռուսական կողմն աշխատում է նախաձեռնությունը խլել Մինսկի խմբից եւ հաշտարարի դերը լրիվությամբ վերցնել իր ձեռքը՝ հակամարտությանն ի վերջո տալով այնպիսի լուծում, որը հարմար է իրեն: Եվ որպես առաջին քայլ՝ Ռուսաստանը նպատակ ունի ռուսական խաղաղապահ ուժեր տեղադրել սահմանում եւ անորոշ ժամանակով սառեցնել հակամարտությունը:

Թշնամին պարզապես ժամանակ է շահում՝ դիմելու նոր խարդախությունների: Նա էլ այդկերպ է մասնագիտացել: Դարերից եկող խարդախ գեները նրան դա են թելադրում՝ սպանել, նվաճել, տիրանալ հայի ունեցածին, լինել ավելի ու ավելի գազան: Հանկարծ կարո՞ղ է այդպիսինը փոխվել 180 աստիճանի տակ: Իսկ մենք նրանից համամարդկային արժեքներ ենք ակնկալում, մեղսակցության գիտակցում: Ոչ, դա չի՛ լինի: Գազանը գնալով ժանիքներն ավելի է սրում մեր դեմ: Գազանի դեմ միայն մի բան կա՝ մահակը պատրաստ պահել: Մահակն էլ մահակ չէ վաղուց, այլ՝ ժամանակակից սպառազինություն:

Ամեն կողմից շրջափակված մեր երկրի պաշտպանական համակարգը ուղիղ համեմատական է երկրի տնտեսությանը. որքան հզոր է տնտեսությունը, այնքան մոտ է հաղթական ավարտը: Որքան մենք համախմբված ենք, այնքան դժվար է մեզ կոտրելը:

Լիլիա ԲԱՂՐՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ